

**ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ
ԿՈՂՄԻՑ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ
ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՅԱՍՏԱՆ

Սույն ուսումնասիրության մշակմանը մասնակցել են մեդիայի, մտավոր սեփականության և ՏՏ իրավունքի ոլորտում մասնագիտացած փաստաբան տիկին Նենա Կրիվոկապիչ Մարտինովիչը և Բրիմինգհեմի համալսարանի դոցենտ դոկտոր Լիդիա Մորգանը: Աշխատանքը գրախոսել է ԶԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի գլխավոր խորհրդական Անտոնինա Չերնկոն:



ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ

Ul. Miodowa 10, PL-00-251 Warsaw
Office: +48 22 520 06 00, Fax: +48 22 520 0605
www.legislationline.org

ՄԵՂՄԱԳԻՐ

Սույն Համեմատական ուսումնասիրությունը կենտրոնանում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց արտահայտման ազատության թեմայի և այն իրավիճակների վրա, որոնցում այս ազատության իրացումը կարող է առաջ բերել հավանական խախտումներ նրանց այն պարտականությունների մասով, որոնք վերաբերում են հանրային պաշտոն զբաղեցնողների համար մշակված վարքագծի կանոններում ընդհանրապես կարգավորվող արտահայտություններին և հայտարարություններին:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և քաղաքացիական ծառայողների՝ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի ներքո արտահայտման ազատության իրավունքներն ընդհանուր առմամբ ենթակա են անկողմնակալության, հայեցողության և քաղաքական չեզոքության պահպանման պարտականություններին, որոնք հավանաբար բխում են նրանց վարքագծի կանոններից կամ համապատասխան օրենսդրությունից: Արտահայտությունների որոշ տեսակներ, ինչպիսիք են՝ ատելության խոսքը, միջազգային չափորոշիչների համաձայն, կարող են նաև սահմանափակումների ենթարկվել, հատկապես այն դեպքերում, երբ այդ խոսքը հանգեցնում է զրպարտության, ապատեղեկատվության և այնպիսի վարքի, որը կարող է խաթարել հաստատութենական բարեվարքությունը կամ հանրային վստահությունը:

Վարքագծի կանոնները պետք է ամրագրեն եթիկական չափորոշիչները՝ չկաշկանդելով ժողովրդավարական բանավեճը կամ խթանելով համապատասխանությունը: Դրանք պետք է անկախ մտածողության, ստեղծագործականության և կառավարության քաղաքականության նկատմամբ իրավաչափ քննադատության հնարավորություն ստեղծեն: Նման կանոնադրքերը պետք է խուսափեն չափազանց լայն մեկնաբանություններից, որոնք կարող են ճնշել սեփական տեսակետների կամ այլախոհության իրավաչափ արտահայտումը:

Սահմանափակումները պետք է վերաբերեն կոնկրետ դեպքերի և դիտարկեն այնպիսի գործոնները, ինչպիսիք են պաշտոնատար անձի պաշտոնը, համատեքստը, միջոցը (օրինակ՝ սոցիալական ցանցեր), տոնը և ժամանակը: Միևնույն ժամանակ հանրային շահին վերաբերող հարցերի վերաբերմամբ բարեխճորեն գործող ազդարարները պետք է օգտվեն պաշտպանությունից:

Սահմանված քաղաքականության շրջանակները պետք է հավասարակշռեն իրավունքներն ու պատասխանատվությունները և կիրառեն սահմանափակումները միայն այն ժամանակ, երբ դրանք օրինական են, անհրաժեշտ, համաչափ և երբ դրանք իրավաչափ նպատակ են հետապնդում: Հարկ է խուսափել լայն ձևակերպումներ ունեցող սահմանափակումներից կամ

«գրոյական հանդուրժողականության» մոտեցումներից՝ ի նպաստ նրբերանգները հաշվի առնող, համաչափ միջոցառումների, հատկապես հաշվի առնելով սոցիալական ցանցերի ներմուծած բարդությունները, որոնց պատճառով անձնական և մասնագիտական սահմանները կորցնում են իրենց հստակ բաժանարարությունը:

Թեև հանրային պաշտոն զբաղեցնող անձինք դեռևս օժտված են իրավունքներով՝ որպես մասնավոր քաղաքացիներ, այդ իրավունքները պետք է իրացվեն այնպես, որ հանրային հաստատությունների նկատմամբ վստահությունը չտուժի առանց հիմնավոր պատճառների և դա անելու համար պատշաճ արդարացումների: Սոցիալական ցանցերը ուժգնացնում են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ձայնը և թուլացնում անձնական և մասնագիտական ինքնության միջև ընկած սահմանները: Որպես այդպիսին, վարքագծի կանոնները պետք է զարգանան այնպես, որ արտացոլեն այս իրականությունը՝ ապահովելով դրանց տրամադրած ուղղորդման հստակությունը, արդարացիությունը և մարդու իրավունքների միջազգային իրավական շրջանակին և գործող չափորոշիչներին համապատասխանությունը:

Վարքագծի կանոնագրքի և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց մասնագիտական վարքի նկատմամբ կիրառելի այլ կարգավորող շրջանակների գոյությունը չպետք է խանգարի նրանց՝ հանրային բանավեճին ազնիվ և իմաստալից կերպով մասնակցությանը:

Պետական մարմինները պետք է մշակեն քաղաքականություններ, որոնք հարգում են արտահայտվելու ազատության հիմնարար իրավունքը՝ միևնույն ժամանակ ապահովելով հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից բարեվարք և անկողմնակալ գործունեությունը և նրանց պաշտոնի նկատմամբ ակնկալվող վստահության ամրապնդումը: Գերակա նպատակն է ապահովել արտահայտվելու ազատությունը՝ միևնույն ժամանակ ապահովելով պետական հաստատությունների նկատմամբ հանրային վստահությունը հստակ, արդարացի և մարդու իրավունքներին համապատասխան չափորոշիչների միջոցով:

ԵԱՀԿ մասնակից պետություններին ԵԱՀԿ մարդկային չափմանը վերաբերող հանձնառությունները կատարելու հարցում աջակցության տրամադրման իր մանդատի շրջանակներում, ԺՀՄԻԳ-ը, համապատասխան խնդրանքի դեպքում, ուսումնասիրում է օրենքների նախագծերը և գործող օրենքները՝ գնահատելու դրանց համապատասխանությունը մարդու իրավունքների միջազգային չափորոշիչներին և ԵԱՀԿ հանձնառություններին և տրամադրում է բարելավման կոնկրետ առաջարկություններ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. INTRODUCTION	ERROR! BOOKMARK NOT DEFINED.
II. SCOPE OF THE NOTE.....	6
III. LEGAL ANALYSIS	8
1. Relevant International Human Rights Standards and OSCE Human Dimension Commitments	8
2. Relevant Domestic Law - Code of Conduct of Certain State Officials	14
3. The Scope of Free Speech for Public Officials	15
3.1. <i>Public Officials and Limitations to their Right to Free Speech</i>	15
3.1.1. <i>Incitement to Discrimination, Hostility or Violence</i>	16
3.2. <i>When Speech Can Become Misconduct</i>	18
3.2.1. <i>Capacity and Context</i>	22
3.2.2. <i>Form and Content of Speech</i>	24
3.2.3. <i>Facts and Opinions</i>	27
3.2.4. <i>Matters of Public Interest</i>	28
4. Social Media and Modern Communication Challenges.....	30
5. Whistle-blowers	Error! Bookmark not defined.
6. Assessment of Breaches of Codes of Conduct	36
7. Comparative Jurisdictional Analysis.....	38
8. Conclusion	Error! Bookmark not defined.

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. 2025 թվականի հունիսի 10-ին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարողը ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ (այսուհետ՝ «ԺՀՄԻԳ») ուղարկեց «Պետական պաշտոնյաների կողմից Վարքագծի կանոնների խախտումների նկատմամբ արտահայտման ազատության միջազգային չափորոշիչների կիրառման համեմատական ուսումնասիրություն» կատարելու խնդրանք: Հաշվի առնելով թեման՝ ԺՀՄԻԳ-ը հրավիրեց Լրատվամիջոցների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի գրասենյակին՝ իրավական շրջանակների սույն ուսումնասիրությունը գրախոսելու:
2. 2025 թվականի հունիսի 13-ին ԺՀՄԻԳ-ը պատասխանեց այս խնդրանքին՝ հաստատելով գրասենյակի պատրաստականությունը՝ կատարելու մի հետազոտություն, որը կներկայացնի մարդու իրավունքների համապատասխան միջազգային չափորոշիչների և ԵԱՀԿ մարդկային չափման ներքո հանձնառությունների ու աշխատակարգերի ամփոփ նկարագիրը ԵԱՀԿ տարածաշրջանում:
3. Սույն Հետազոտությունը պատրաստվել է վերը նշված խնդրանքին ի պատասխան: ԺՀՄԻԳ-ն այս գնահատումն իրականացրել է իր մանդատի շրջանակներում՝ ԵԱՀԿ մասնակից պետություններին ԵԱՀԿ-ի առջև ստանձնած հանձնառությունների իրականացման գործում աջակցելու նպատակով:

II. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

4. Սույն Ուսումնասիրությունը քննում է պետական պաշտոնյաների (այսուհետ՝ «հանրային պաշտոն գրադեցնող անձանց և քաղաքացիական ծառայողների») արտահայտման ազատության շրջանակը և սահմանում է այն պայմանները, որոնց դեպքում նման արտահայտությունները կարող են ենթարկվել ուսումնասիրության՝ վարքականոնի կիրառելի դրույթներին համապատասխանության ապահովման համար: Հետազոտությունն առանցքային հարցեր է բարձրացնում և ի ցույց է դնում մտահոգիչ ոլորտները: Իրավական սույն ուսումնասիրությունը հիմնված է մարդու իրավունքների և իրավունքի գերակայության միջազգային և տարածաշրջանային չափորոշիչների, նորմերի և առաջարկությունների, ինչպես նաև ԵԱՀԿ մարդկային չափման ներքո համապատասխան պարտավորությունների վրա: Ուսումնասիրությունը նաև, ըստ անհրաժեշտության, ընդգծում է ԵԱՀԿ մասնակից այլ պետությունների լավագույն փորձն այս ոլորտում: Դրա հիմնական նպատակն է ներկայացնել այս հարցի վերաբերյալ ԵԱՀԿ

- տարածաշրջանում մարդու իրավունքների համապատասխան միջազգային չափորոշիչների և առաջարկությունների, ԵԱՀԿ հանձնառությունների և համեմատական աշխատակարգերի ամփոփ նկարագիրը:
5. Ներպետական օրենսդրությանը հղում անելիս ԺՀՄԻԳ-ը չի ջատագովում որևէ կոնկրետ երկրի մոդել, այլ կենտրոնանում է կիրառելի միջազգային չափորոշիչների վերաբերյալ հստակ տեղեկատվություն տրամադրելու վրա՝ միաժամանակ ցույց տալով, թե ինչպես են դրանք գործնականում կիրառվում որոշակի ներպետական օրենսդրության շրջանակներում: Որևէ երկրի օրինակին հարկ է միշտ մոտենալ զգուշությամբ, քանի որ պարտադիր չէ, որ դրա կրկնօրինակումը մեկ այլ երկրում հնարավոր լինի, ուստի միշտ հարկ է այն դիտարկել ավելի լայն ներպետական հաստատութենական և իրավական շրջանակի, ինչպես նաև երկրի համատեքստի և քաղաքական մշակույթի լույսի ներքո:
 6. Ուսումնասիրության նպատակը հարցին ընդհանրական մակարդակի պատասխան տալն է և, հետևաբար, Հայաստանի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կամ քաղաքացիական ծառայողներին վերաբերող ավելի լայն իրավական և հաստատութենական շրջանակների, ինչպես նաև կարգավորումների համապարփակ վերլուծությունն է: Այնուամենայնիվ, ըստ անհրաժեշտության և կիրառելիության, Ուսումնասիրությունը կարող է նաև հղում կատարել Հայաստանի իրավական շրջանակին՝ սույն իրավական վերլուծությունը երկրի համատեքստին և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց իրավիճակին հարմարեցնելու նպատակով: Սույն Ուսումնասիրությունն առանցքային հարցեր է բարձրացնում և ձգտում է տրամադրել ընդհանուր ուղենշային սկզբունքներ, որոնք հիմք կհանդիսանան հնարավոր օրենսդրական կամ քաղաքականության ուղեցույցի համար:
 7. Ավելին, «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի¹ (այսուհետ՝ «CEDAW») և 2004 թվականի «ԵԱՀԿ գենդերային հավասարության խթանման գործողությունների ծրագրի»² համաձայն, ինչպես նաև ԵԱՀԿ գործունեությունում, ծրագրերում և նախագծերում գենդերային բաղադրիչի ներառման պարտավորություններին համապատասխան, Ուսումնասիրությունը, ըստ նպատակահարմարության, ներառում է նաև գենդերային և բազմազանության դիտանկյունը:
 8. Ուսումնասիրության՝ այլ լեզվով թարգմանության դեպքում գերակա կհամարվի անգլերեն տարբերակը: Հաշվի առնելով վերը նշվածը՝ ԺՀՄԻԳ-ը ցանկանում է ընդգծել, որ այս Ուսումնասիրությունը խոչընդոտ չէ ԺՀՄԻԳ-ի համար՝ Հայաստանում համապատասխան հարցերի վերաբերյալ

¹ ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա (այսուհետ՝ «CEDAW»), որն ընդունվել է Գլխավոր ասամբլեայի 34/180 բանաձևով 1979 թվականի դեկտեմբերի 18-ին: Ուկրաինան այս կոնվենցիայի վավերացման իր փաստաթուղթը ներկայացրել է 1981 թվականի մարտի 12-ին:

² Տե՛ս՝ [ԵԱՀԿ-ի գենդերային հավասարության խթանման գործողությունների ծրագիրը](#), որն ընդունվել է թիվ 14/04 որոշմամբ, MC.DEC/14/04 (2004), պարբերություն 32:

հետագայում լրացուցիչ գրավոր կամ բանավոր առաջարկություններով կամ մեկնաբանություններով հանդես գալու առումով:

III. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԵՐԱԲԵՐԵԼԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԵԱՀԿ ՄԱՐԿԱՅԻՆ ԶԱՓՄԱՆ ՆԵՐՔՈ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Արտահայտվելու ազատության իրավունքը, ներառյալ տեղեկատվություն փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքը, մարդու իրավունք է, որն էական է ժողովրդավարության գործառնման համար և կենտրոնական դեր ունի այլ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրացման գործում: Այս իրավունքի լիարժեք իրացումը ազատ, ժողովրդավարական, հանդուրժող և բազմակարծ այնպիսի հասարակության հիմքերից է, որտեղ տարբեր ծագում և համոզմունքներ ունեցող անհատներն ու խմբերը կարող են արտահայտել իրենց կարծիքը և որտեղ միևնույն ժամանակ տեսանելիություն է ապահովվում մարզինալացված կամ թերներկայացված խմբերի համար:
10. Արտահայտման ազատության և տեղեկատվություն ստանալու ու տարածելու իրավունքը ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (ՄԻՀՀ) 19-րդ հոդվածում:³ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ) 19-րդ հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի անարգել կերպով հավատարիմ մնալ իր կարծիքներին» և որ «Յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի ինֆորմացիա ու գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը»:⁴ ՔՔԻՄԴ-ի 19-րդ հոդվածը սահմանում է միջոցի չեզոքության սկզբունքը՝ նշելով, որ այս իրավունքները կարող են իրականացվել անկախ օգտագործվող միջոցից: ՔՔԻՄԴ-ի 19-րդ հոդվածի վերաբերյալ թիվ 34 ընդհանուր մեկնաբանության մեջ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն լրացուցիչ ընդգծում է ազատ, չգրաքննված և անխոչընդոտ գործող մամուլի կամ այլ լրատվամիջոցի էական դերը որպես ժողովրդավարական հասարակության անկյունաքար: Այն նաև հանձնարարականներ է մշակում զանգվածային լրատվամիջոցների

³ Տե՛ս՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (ՄԻՀՀ), Միավորված ազգերի կամակերպության Գլխավոր ասամբլեայի 217 Ա բանաձևը, որն ընդունվել է 1948 թվականի դեկտեմբերի 10-ին, 19-րդ հոդված:

⁴ Տե՛ս՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը», որն ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1966 թվականի դեկտեմբերի 16-ի 2200A (XXI) բանաձևով: Հայաստանը Դաշնագրին է միացել 1993 թվականի հունիսի 23-ին:

կարգավորման համար օրենսդրական և վարչական շրջանակների վերաբերյալ:⁵

11. Արտահայտվելու ազատության իրավունքը բացարձակ չէ և կարող է սահմանափակվել որոշակի հանգամանքներում: Այնուամենայնիվ, արտահայտվելու ազատության իրավունքի սահմանափակումները պետք է համատեղելի լինեն ՔՔԻՄԴ-ի 19-րդ հոդվածի 3-րդ կետում սահմանված խիստ պահանջների հետ: Նշենք, որ դրանք պետք է նախատեսված լինեն օրենքով (օրինականության պահանջ), հետապնդեն 19-րդ հոդվածի 3-րդ կետի տեքստում սպառնիչ ցանկով թվարկված օրինական նպատակներից մեկը (իրավաչափության պահանջ),⁶ լինեն անհրաժեշտ և համաչափ և լինեն սահմանված նպատակին հասնելու համար բավականաչափ արդյունավետ միջոցներից նվազագույն ներխուժող միջոցը (անհրաժեշտության և համաչափության պահանջ): Արտահայտվելու ազատության սահմանափակումների՝ օրենքով նախատեսված լինելու պահանջը նշանակում է ոչ միայն այն, որ սահմանափակումները պետք է հիմնված լինեն օրենքի վրա, այլև այն, որ այդ օրենքը պետք է լինի ճշգրիտ, պարզ և կանխատեսելի: Օրենքները պետք է ձևակերպվեն բավարար ճշգրտությամբ, որպեսզի անձը կարողանա համապատասխանաբար կարգավորել իր վարքագիծը:⁷ Սահմանափակումները պետք է կիրառվեն միայն դրանց համար նախանշված նպատակներով և պետք է ուղղակիորեն կապված լինեն դրանց հետապնդած կոնկրետ նպատակ(ներ)ի հետ: Բացի այդ, ՔՔԻՄԴ-ի 26-րդ հոդվածի համաձայն, սահմանափակումները չպետք է խտրական լինեն: Ավելին, ՔՔԻՄԴ-ի 20-րդ հոդվածի 2-րդ կետը նշում է, որ *«ազգային, ռասայական կամ կրոնական ատելության օգտին որևէ ելույթ, որը խտրականության, թշնամանքի կամ բռնության սադրանք է, պետք է արգելվի օրենքով»*:

⁵ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային կոնվենցիայի 19-րդ հոդվածի՝ «Կարծիքի և արտահայտվելու ազատությունների» վերաբերյալ թիվ 34 ընդհանուր մեկնաբանություն», CCPR/C/GC/34, 2011 թվականի սեպտեմբերի 12, մասնավորապես՝ պարբերություններ 13-18 և 39-42:

⁶ Այսինքն՝ (ա) ուրիշների իրավունքները կամ հեղինակությունը հարգելու համար, (բ) ազգային անվտանգության կամ հասարակական կարգի (ordre public) կամ հանրային առողջության կամ բարոյականության պաշտպանության համար:

⁷ Տե՛ս՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային կոնվենցիայի 19-րդ հոդվածի՝ «Կարծիքի և արտահայտվելու ազատությունների» վերաբերյալ թիվ 34 ընդհանուր մեկնաբանություն», CCPR/C/GC/34, 2011 թվականի սեպտեմբերի 12, պարբերություն 25, որտեղ նշվում է. «Նորմը, որը բնութագրվում է որպես «օրենք», պետք է ձևակերպված լինի բավարար ճշգրտությամբ, որպեսզի անհատը հնարավորություն ստանա համապատասխանաբար կարգավորել իր վարքագիծը, և այն պետք է հասնելի լինի հանրությանը: Օրենքը չի կարող այն կիրարկողներին անսահմանափակ հայեցողություն տալ՝ արտահայտվելու ազատությունը սահմանափակելու համար: Օրենքները պետք է բավարար ուղղորդում տրամադրեն դրանց կիրարկման համար պատասխանատու անձանց, որպեսզի վերջիններս կարողանան որոշարկել, թե արտահայտման որ տեսակներն են պատշաճ կերպով սահմանափակվում, և որոնք ոչ»: Տե՛ս նաև, օրինակ՝ ԺՀՄԴ, «Ժողովրդավարական օրենսդրական գործունեության ուղեցույցներ՝ հանուն ավելի լավ օրենքների», ԺՀՄԴ, 2024 թվականի հունվարի 16, պարբերություն 12 և սկզբունք 16, և Վենետիկի հանձնաժողով, «Իրավունքի գերակայության ստուգաթերթիկ», CDL-AD(2016)007, 2016 թվականի մարտի 18, պարբերություն 58: Բացի այդ, համեմատության և տարածաշրջանային լավագույն փորձի օրինակը տե՛ս այստեղ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԵԵԴ), The Sunday Times-ը ընդդեմ Միացյալ Թագավորության (թիվ 1), թիվ 6538/74, 26 ապրիլի 1979թ., որտեղ Դատարանը որոշել է, որ «օրենքը պետք է ձևակերպվի բավարար ճշգրտությամբ, որպեսզի քաղաքացուն հնարավորություն տրվի կարգավորել իր վարքագիծը, քանի որ նա կկարողանա կանխատեսել, թե ինչն է ողջամիտ և ինչպիսի հետևանքներ կարող է առաջացնել գործողությունը»:

12. Էլ ավելի մեծ վերաբերելիություն ունի ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան (UNCAC),⁸ որը կենսական դեր է խաղում հանրային կառավարման ոլորտում բարեվարքության, թափանցիկության և հաշվետվողականության խթանման գործում: UNCAC-ի 8-րդ հոդվածը կոչ է անում մասնակից պետություններին իրականացնել միջոցառումներ, որոնք խթանում են բարեվարքությունը և կանխում կոռուպցիան հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց շրջանում, այդ թվում՝ վարքագծի կանոնադրքերի, շահերի բախման վերաբերյալ կանոնների և ակտիվների հայտարարագրման միջոցով: Թեև UNCAC-ը շեշտը դնում է էթիկական վարքագծի և թափանցիկության վրա, այն արտահայտվելու ազատության սահմանափակումներ չի պարտադրում: Փոխարենը, այն պահանջում է, որ որևէ նմանօրինակ չափորոշիչ կամ սահմանափակում լինի հստակ, համաչափ և համապատասխանի այլ միջազգային պարտավորություններին, մասնավորապես՝ ԲՔԻՄԴ-ի 19-րդ հոդվածով նախատեսված արտահայտվելու ազատության իրավունքին: Որպես այդպիսին, UNCAC-ին համապատասխան մշակված վարքագծի կանոնադրքերը պետք է ջանասիրությամբ այնպես մշակվեն, որ պաշտպանեն հանրային բարեվարքությունը՝ չխաթարելով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց արտահայտվելու ազատության իրավունքը, հատկապես հանրային շահերին կամ չարաշահումներին վերաբերող հարցերում: Այս համատեքստում, ազդարարների պաշտպանությունը և հաշվեհարդարի միտում ունեցող պատժամիջոցներից պաշտպանությունը կարևոր են՝ բարեվարքության համակարգերի համատեղելիությունը հիմնարար իրավունքների հետ ապահովելու համար:
13. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 10-րդ հոդվածը,⁹ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ (ՄԻԵԴ) արտահայտվելու ազատության և լրատվամիջոցների ազատության ոլորտում նախադեպային որոշումները, Եվրոպայի խորհրդի (ԵԽ) այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց հետ կապված փաստաթղթեր, ինչպիսիք են ԵԽ-ի՝ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) կարծիքները, նույնպես համեմատական տեսանկյունից վերաբերելի են և օգտակար:¹⁰
14. Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված «Հանրային պաշտոնյաների վարքագծի կանոնակարգերի մասին» թիվ R(2000)10 հանձնարարականը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում հանրային պաշտոնյաների վարքագծի կանոնադրքերի մշակման և իրականացման համար հիմնարար շրջանակ է ապահովում: Այն ընդգծում է հանրային կառավարման ոլորտում բարեվարքության, թափանցիկության, հաշվետվողականության և էթիկական բարձր չափորոշիչների խթանման կարևորությունը և կենտրոնանում է կոռուպցիայի դեմ պայքարի

⁸ Հայաստանը Կոնվենցիան վավերացրել է 2007 թվականի մարտի 8-ին:

⁹ Տե՛ս՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա (ՄԻԵԿ), Եվրոպայի խորհուրդ, ուժի մեջ է մտել 1953 թվականի սեպտեմբերի 3-ին, 10-րդ հոդված:

¹⁰ Տես փաստաթղթերը, որոնք հասանելի են հետևյալ հասցեով՝ <<https://www.coe.int/en/web/freedom-expression/media>>:

միջոցառումների վրա: Ավելի կարևոր է այն, որ հանձնարարականը հատուկ սահմանափակումներ չի ներմուծում կամ չի պարտադրում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց արտահայտվելու ազատության նկատմամբ, սակայն այն ազգային մակարդակում ընդունվող վարքագծի կանոնագրքի մոդել է տրամադրում: Սա, թերևս, նշանակում է, որ այս առումով հարկ է հաշվի առնել ընդհանուր սահմանափակումները, իսկ վարքագծի կանոնագիրքը պետք է մշակվի՝ հաշվի առնելով մարդու ավելի լայն իրավունքներն ու պարտականությունները, ներառյալ արտահայտվելու ազատության ընդհանուր դրույթների շրջանակներում վերը նշված բոլոր չափորոշիչները:

15. Անդամ պետություններին «Ատելության խոսքի դեմ պայքարի մասին» Նախարարների կոմիտեի CM/Rec(2022)16 հանձնարարականի 3-րդ բաժնում ներկայացված են հանձնարարականներ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, ընտրված մարմինների և կուսակցությունների համար: Այստեղ հստակ նշված է, որ ատելության խոսքի լուրջ ձևերը պաշտպանված խոսք չեն համարվում և դուրս են մնում մարդու իրավունքների միջազգային իրավական շրջանակի ներքո արտահայտվելու ազատության պաշտպանությունից: Այս հանձնարարականն ընդգծում է հանրային պաշտոնյաների և քաղաքական ներկայացուցիչների պատասխանատվությունը՝ հստակ և հրապարակայնորեն դատապարտելու ատելության խոսքը և ձեռնպահ մնալու նման արտահայտություններ կիրառելուց կամ դրանք լեգիտիմացնելուց: Սույն հանձնարարականը համապատասխանում է վերը նշված չափորոշիչներին, որոնք թույլ են տալիս սահմանափակումներ կիրառել ատելություն, խտրականություն և/կամ բռնություն հրահրող խոսքի նկատմամբ: Որպես այդպիսին, այս սահմանափակումները ոչ միայն իրավաչափ են, այլև անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում, իսկ հանձնարարականը համապատասխանաբար կոչ է անում կոշտ դիրքորոշում որդեգրել ատելության խոսքի դեմ՝ առանց արտահայտվելու ազատությունը խաթարելու:
16. ԵԱՀԿ մակարդակում արտահայտվելու ազատության, տեղեկատվության հասանելիության և լրատվամիջոցների ազատության ոլորտում մի շարք հանձնառություններ կան: Մասնավորապես, 1990 թվականի ԵԱՀԽ-ի՝ մարդկային չափմանը վերաբերող խորհրդածողովի Կոպենհագենի խորհրդակցության փաստաթուղթը (1990 թվականի Կոպենհագենի փաստաթուղթ) հռչակում է յուրաքանչյուրի արտահայտվելու ազատության իրավունքը, ներառյալ՝ կարծիք ունենալու և տեղեկատվություն ու գաղափարներ ստանալու ու տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս իրավունքի իրացման սահմանափակումները հնարավոր են միայն այն դեպքում, երբ դրանք նախատեսված են օրենքով և համապատասխանում են միջազգային չափորոշիչներին:¹¹ ԵԱՀԿ մասնակից պետությունները նաև վերահաստատել

¹¹ Տե՛ս՝ ԵԱՀԽ-ի մարդկային չափման վերաբերյալ խորհրդածողովի Կոպենհագենի խորհրդակցության փաստաթուղթը (Կոպենհագենի փաստաթուղթ), ԵԱՀԽ/ԵԱՀԿ, 1990 թվականի հունիսի 29, պարբերություն 9.1:

են «արտահայտվելու ազատության իրավունքը, ներառյալ հաղորդակցության իրավունքը և լրատվամիջոցների՝ տեղեկատվություն, նորություններ և կարծիքներ հավաքելու, հաղորդելու և տարածելու իրավունքը» ԵԱՀԽ-ի մարդկային չափմանը վերաբերող խորհրդածոցովի Մոսկվայի խորհրդակցության փաստաթղթի (1991 թվականի Մոսկվայի փաստաթուղթ) 26-րդ կետում:¹² Ավելին, 1994 թվականին Բուդապեշտում ԵԱՀԿ մասնակից պետությունները վերահաստատեցին, որ «արտահայտվելու ազատությունը մարդու հիմնարար իրավունք է և ժողովրդավարական հասարակության հիմնական բաղադրիչ»՝ պարտավորվելով «այս իրավունքի պաշտպանությունը որդեգրել որպես իրենց համար ուղենիշային սկզբունք» և այս առումով ընդգծելով, որ «անկախ և բազմակարծ լրատվամիջոցները կարևոր են ազատ և բաց հասարակության և կառավարման հաշվետվողական համակարգերի համար»:¹³

17. ԵԱՀԿ-ի մասնակից պետությունների կողմից խտրականության և «ատելության շարժառիթով կատարված հանցագործությունների» դեմ պայքարին են վերաբերում նաև ԵԱՀԿ մասնակից պետությունների բազմաթիվ պարտավորություններ,¹⁴ մասնավորապես՝ «Ատելության շարժառիթով կատարված հանցագործությունների դեմ պայքարի մասին» Նախարարների խորհրդի թիվ 9/09 որոշումը, որը կոչ է անում ԵԱՀԿ մասնակից պետություններին «ըստ անհրաժեշտության, ատելության շարժառիթով կատարված հանցագործությունների դեմ պայքարելու համար ընդունել հատուկ, հարմարեցված օրենսդրություն, որը նախատեսում է արդյունավետ պատժամիջոցներ, որոնք հաշվի են առնում նման հանցագործությունների ծանրությունը»:¹⁵
18. 2018 թվականի դեկտեմբերի 7-ին ընդունված իր 3/18 որոշմամբ ԵԱՀԿ Նախարարների խորհուրդը կոչ արեց ԵԱՀԿ մասնակից պետություններին լիովին կատարել արտահայտվելու ազատությանը և լրատվամիջոցների ազատությանը վերաբերող ԵԱՀԿ առջև ստանձնած բոլոր հանձնառությունները և միջազգային պարտավորությունները, ինչպես նաև լրատվամիջոցների ազատությանը վերաբերող իրենց օրենքները, քաղաքականությունները և գործելակերպերը լիովին համապատասխանեցնել իրենց միջազգային պարտավորություններին: Մասնավորապես, Որոշման մեջ նշվում էր, որ անհրաժեշտության դեպքում Պետությունները պետք է

12 Տե՛ս՝ ԵԱՀԽ-ի մարդկային չափման վերաբերյալ խորհրդածոցովի Մոսկվայի խորհրդակցության փաստաթուղթը (Մոսկվայի փաստաթուղթ), ԵԱՀԽ/ԵԱՀԿ, 1991 թվականի հոկտեմբերի 3, պարբերություն 26:

13 Տե՛ս՝ ԵԱՀԿ Բուդապեշտի 1994 թվականի փաստաթուղթը, «Դեպի իսկական գործընկերություն նոր դարաշրջանում» (Բուդապեշտի փաստաթուղթ), ԵԱՀԽ/ԵԱՀԿ, 1994 թվականի դեկտեմբերի 21, գլուխ VIII, պարբերություն 36:

14 Տե՛ս, օրինակ՝ ԵԱՀԿ Նախարարների խորհրդի 2003 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 4/03 որոշումը, պարբերություն 8; ԵԱՀԿ Մշտական խորհրդի 2004 թվականի հուլիսի 29-ի թիվ 621 որոշումը՝ «Հանդուրժողականության և խտրականության, օտարաշայացության և խտրականության դեմ պայքարի մասին», պարբերություն 1; և ԵԱՀԿ տարածքում ռումաների և սինտիների իրավիճակի բարելավման գործողությունների ծրագրի վերաբերյալ թիվ 3/03 որոշման հավելվածը, MC.DEC/3/03, 2003 թվականի դեկտեմբերի 2, պարբերություն 9, հասանելի է այստեղ՝ <http://www.osce.org/odihr/17554?download=true>, որը հանձնարարում է «ավելի խիստ պատիժների կիրառում ինչպես մասնավոր անձանց, այնպես էլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ռասայական շարժառիթներով կատարված հանցագործությունների համար»:

15 Տե՛ս ԵԱՀԿ-ի նախարարական խորհրդի թիվ 9/09 որոշումը ատելության շարժառիթով կատարված հանցագործությունների դեմ պայքարի մասին, 2 դեկտեմբերի 2009թ., պարբերություն 9:

վերանայեն, չեղյալ հայտարարեն կամ փոփոխեն նման օրենքները, քաղաքականությունը կամ գործելակերպը, «որպեսզի դրանք չսահմանափակեն լրագրողների՝ իրենց աշխատանքը անկախ և առանց անհարկի միջամտության կատարելու կարողությունը (...):»¹⁶

19. Քաղաքական գործիչների, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և միջազգային մանդատով օժտվածների կողմից արտահայտվելու ազատության վերաբերյալ 2021 թվականի Համատեղ հռչակագրում նախատեսվել է, որ պետությունները պետք է որոշակի չափորոշիչներ ընդունեն ապատեղեկատվության և կեղծ լուրերի վերաբերյալ, այդ թվում՝ «որդեգրելով քաղաքականություններ, որոնք նախատեսում են կարգապահական միջոցների կիրառում այն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ, ովքեր, ի պաշտոնե գործելով կամ որպես պաշտոնական անձ ընկալվելով, անում, հովանավորում, խրախուսում կամ տարածում են այնպիսի հայտարարություններ, որոնց կեղծ լինելու մասին նրանք տեղյակ են կամ պետք է ողջամտորեն տեղյակ լինեին, և «... ապահովել պետական իշխանությունների կողմից բոլոր ջանքերի գործադրումը՝ ճշգրիտ և հուսալի տեղեկատվություն տարածելու համար, այդ թվում՝ իրենց գործունեության և հանրային շահին առնչվող հարցերի վերաբերյալ»¹⁷ Համատեղ հռչակագրում նաև հանձնարարականներ են տրվում կուսակցությունների, քաղաքական գործիչների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից այսպես կոչված ատելության խոսքի դեմ պայքարի վերաբերյալ, որում ներառվում է նաև վարքագծի կանոնների ընդունումը¹⁸

16 Տե՛ս ԵԱՀԿ-ի նախարարական խորհրդի թիվ 3/18 որոշում, «Լրագրողների անվտանգությունը», 12 դեկտեմբերի 2018թ., էջ 3:

17 Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Կարծիքի և արտահայտման ազատության պաշտպանության և խթանման հարցերով հատուկ զեկուցողի, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) լրատվամիջոցների ազատության հարցերով ներկայացուցչի, Ամերիկյան պետությունների կազմակերպության (ԱՊԿ) արտահայտման ազատության հարցերով հատուկ զեկուցողի և Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան հանձնաժողովի (ՄԺԲԱՀ) արտահայտման ազատության և տեղեկատվության հասանելիության հարցերով հատուկ զեկուցողի համատեղ հռչակագիր քաղաքական գործիչների, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և արտահայտման ազատության վերաբերյալ, 2021թ.: Հասանելի է այստեղ: 501697.pdf

18 Համատեղ հռչակագիրը նախատեսում է. ե. «Ատելության խոսք»

[...]

3. Հանձնարարականներ կուսակցություններին, քաղաքական գործիչներին և բարձրաստիճան հանրային պաշտոն զբաղեցնող անձանց.

i. Կուսակցությունները պետք է ընդունեն և ձեռնարկեն միջոցառումներ, ինչպիսիք են՝ վարքագծի կանոնագրքերը, որոնք սահմանում են իրենց պաշտոնյաների և ընտրովի պաշտոնների համար թեկնածուների վարքագծի նվազագույն չափորոշիչներ, այդ թվում՝ անհանդուրժողականություն, խտրականություն կամ ատելություն խթանող կամ արտահայտվելու ազատությունը կամ այլ մարդու իրավունքները սահմանափակող ապատեղեկատվություն պարունակող խոսքի դեմ պայքարելու համար:

ii. Կուսակցությունները պետք է քննարկեն միջկուսակցական նախաձեռնությունների ներդրումը կամ դրանց մասնակցությունը՝ ուղղված անհանդուրժողականության, խտրականության և ապատեղեկատվության դեմ պայքարին, ինչպես նաև միջմշակութային փոխըմբռնմանը, սոցիալական ներառմանը և բազմազանության նկատմամբ հարգանքին:

iii. Քաղաքական գործիչները և հանրային պաշտոն զբաղեցնող անձինք չպետք է անեն հայտարարություններ, որոնք, հավանաբար, կխթանեն անհանդուրժողականությունը, խտրականությունը կամ ապատեղեկատվությունը, և փոխարենը պետք է օգտագործեն իրենց ղեկավար պաշտոնները՝ այդ սոցիալական վնասներին հակազդելու և միջմշակութային փոխըմբռնումը և բազմազանության նկատմամբ հարգանքը խթանելու համար:

iv. Մամուլի ատուլիսներ անցկացնելիս քաղաքական գործիչները և հանրային պաշտոն զբաղեցնող անձինք պետք է հարգանքով վերաբերվեն մասնակիցներին և ապահովեն նրանց՝ հարցեր տալու հավասար հնարավորությունը:

20. Հաջորդիվ ներկայացրած բաժիններում, անհրաժեշտության դեպքում, հղումներ կարվեն նաև այլ պարտադիր իրավական ուժ չունեցող փաստաթղթերի, որոնք մշակվել են տարբեր միջազգային և տարածաշրջանային ֆորումներում և կարող են օգտակար լինել, քանի որ դրանք ավելի մանրամասն տեղեկություններ են պարունակում այն մասին, թե ինչպես է պետք մեկնաբանել միջազգային չափորոշիչները՝ ներկայացնելով նաև լավագույն փորձի օրինակներ:¹⁹

2. ՎԵՐԱԲԵՐԵԼԻ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ

21. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ընդունել է պետական պաշտոններ զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորների, դատավորների, Բարձրագույն դատական խորհրդի անդամների, դատախազների և քննիչների), ինչպես նաև համայնքների ղեկավարների և նրանց տեղակալների, Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների համար ՀՀ վարքագծի կանոնագիրքը, որն ուժի մեջ է մտել 2024 թվականի ապրիլի 1-ին և ունի պարտադիր իրավական ուժ: Դրա իրավական հիմքը «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածն է, որը հստակ պահանջ է սահմանում առ այն, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ընդունված վարքագծի կանոնագրքով: Վարքագծի կանոնագիրքն ունի մի շարք դրույթներ, որոնք վերաբերում են արտահայտվելու ազատությանը: Դրանք ներառում են, մասնավորապես, քաղաքավարության և հարգալիրության սկզբունքի վերաբերյալ 36-37 հոդվածները և սոցիալական ցանցերի օգտագործման վերաբերյալ 46-51 հոդվածները (4-րդ բաժին, գլուխ 1): Այս դրույթներում բարձրացված հարցերը կվերլուծվեն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց իրավունքների և պարտականությունների ավելի լայն համատեքստում՝ հատուկ ուշադրություն դարձնելով նրան, թե արդյոք կիրառվող սահմանափակումները համապատասխանում են մարդու իրավունքների միջազգային իրավական շրջանակին և արտահայտվելու ազատության վերաբերյալ համապատասխան չափորոշիչներին:

v. Քաղաքական գործիչները և հանրային պաշտոն զբաղեցնող անձինք չպետք է դիտավորությամբ կեղծ հայտարարություններ անեն, որոնք հարձակվում են լրագրողների, լրատվամիջոցների աշխատողների կամ մարդու իրավունքների պաշտպանների ազնվության վրա:

19 Դրանց թվում են, օրինակ՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի կարծիքի և արտահայտման ազատությունների վերաբերյալ թիվ 34 ընդհանուր մեկնաբանությունը (2011թ.), կարծիքի և արտահայտման ազատության իրավունքի խթանման և պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի (այսուհետ՝ «ՄԱԿ-ի կարծիքի և արտահայտման ազատության հարցերով հատուկ զեկուցող») և մարդու իրավունքներով զբաղվելու մանդատ ունեցող այլ ինստիտուտների զեկույցները (հասանելի է այստեղ՝ <<https://www.ohchr.org/EN/Issues/FreedomOpinion/Pages/Annual.aspx>>), լրատվամիջոցների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի (հասանելի է այստեղ՝ <[https://www.osce.org/resources/documents/?filters=+im_taxonomy_vid_1:\(27\)&solrsort=score%20desc&rows=10](https://www.osce.org/resources/documents/?filters=+im_taxonomy_vid_1:(27)&solrsort=score%20desc&rows=10)>) և ազգային փոքրամասնությունների հարցերով ԵԱՀԿ գերագույն հանձնակատարի կողմից կողմից հրապարակված փաստաթղթերն ու ուղեցույցները (հասանելի է՝ <<https://www.osce.org/hcnm/thematic-recommendations-and-guidelines>>) և ՄԱԿ-ի հեռահաղորդակցության միջազգային միության թվային ներառման վերաբերյալ բանաձևերը (ՀՄՄ, Ուզբեկստանի Հանրապետությունը միացել է ՀՄՄ-ին՝ ՄԱԿ-ի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների մասնագիտացված գործակալությանը, 1992 թվականի հուլիսի 10-ին):

3. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ԱԶԱՏ ԽՈՍՔԻ ՇՐՋԱՆԱԿԸ

3.1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և նրանց ազատ խոսքի սահմանափակումները

22. Ի սկզբանե հարկ է նշել, որ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածը վերաբերում է նաև մասնագիտական այն միջավայրերին, որոնք ներառում են պետության և պետական մարմինների աշխատողներին: Այսպիսով, հանրային պաշտոն զբաղեցնող անձինք ունեն արտահայտվելու ազատության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն որոշակի պայմաններում և վերոնշյալ եռակողմ թեստի պահանջներին համապատասխան: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կամ քաղաքացիական ծառայողների ազատ խոսքի կոնկրետ համատեքստում ի հայտ է գալիս որոշակի բարդություն, քանի որ նրանք և՛ քաղաքացիներ են, և՛ պետության ներկայացուցիչներ: Ինչպես բոլոր քաղաքացիները, նրանք պետք է ունենան արտահայտվելու ազատության իրավունք, քանի որ ժողովրդավարությունը պահանջում է ակտիվ մասնակցություն: Միևնույն ժամանակ, կառավարության գործունեությանը մոտ լինելով՝ նրանք դառնում են տեղեկատվության կարևոր աղբյուրներ, և հանրային հարցեր քննարկելու կամ խախտումները բացահայտելու նրանց կարողությունը կարևոր է հակակշիռների և զսպումների պահպանման համար: Այնուամենայնիվ, իրենց աշխատանքի բնույթից ելնելով՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք ունեն իրենց արտահայտվելու ազատության հետ կապված որոշակի պարտականություններ և պատասխանատվություն: Հետևաբար, հավասարակշռման կարիք ունեցող գործոնները հետևյալն են. մի կողմից՝ ժողովրդավարության սկզբունքները, որոնք ներառում են ազատ խոսքը, և մյուս կողմից՝ հանրային ծառայության բարեվարքությունը և քաղաքականապես չեզոք հանրային կառավարման վարչակազմ ապահովելու անհրաժեշտությունը:
23. Ընդհանուր առմամբ, համարվում է, որ քաղաքական խոսքը հատկապես բարձր մակարդակի պաշտպանության է արժանանում: Մարդու իրավունքների կոմիտեն իր՝ 2011 թվականի Արտահայտվելու ազատության մասին 34-րդ ընդհանուր մեկնաբանության մեջ ընդգծել է, որ մարդու իրավունքների միջազգային իրավական շրջանակում հատկապես բարձր մակարդակի պաշտպանության են արժանանում հանրային շահին վերաբերող հարցերին առնչվող արտահայտությունները, ներառյալ՝ կառավարությունների և քաղաքական առաջնորդների հասցեին ուղղված քննադատությունը, ինչպես նաև քաղաքական գործիչների և այլ հասարակական գործիչների ելույթները:²⁰ Ընդհանուր առմամբ, խոսքի պաշտպանության այս դեպքերը համարվում են ընդգրկուն և չեն սահմանափակվում միայն «*բարենպաստ կերպով ընդունվող կամ որպես ոչ վիրավորական համարվող*» արտահայտություններով, այլ ներառում են նաև «*պետությանը կամ բնակչության որևէ շերտին վիրավորող, ցնցող կամ*

²⁰ Մարդու իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 34 (Հոդված 19. Կարծիքի և արտահայտման ազատություններ), CCPR/C/GC/34, 2011 թվականի սեպտեմբերի 12, պարբերություն 38:

անհանգստացնող» արտահայտություններ:²¹ Արտահայտման ազատության իրավունքը բացարձակ չէ և կարող է սահմանափակվել որոշակի հանգամանքներում:

24. Միևնույն ժամանակ, քաղաքական գործիչներն ու հանրային պաշտոններ զբաղեցնող անձինք մեծ պատասխանատվություն են կրում իրենց արտահայտվելու վարքագծի համար, քանի որ իրենց հանրային դիրքորոշման և հասանելիության շնորհիվ նրանց խոսքը կարող է ավելի լայն և ինտենսիվ ազդեցություն ունենալ լսարանի վրա՝ այդպիսով հավանաբար հանգեցնելով վնասակար և/կամ անօրինական հետևանքների:

3.1.1. Խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրումը

25. Մարդու իրավունքների միջազգային իրավական շրջանակը ճանաչում է բովանդակության կամ արտահայտման սահմանափակ թվով տեսակներ, որոնք Պետությունները պետք է արգելեն կամ պատժեն (օրենքով), պայմանով, որ իրավական դրույթները հստակ սահմանված և խստորեն մեկնաբանված լինեն արտահայտման ազատության միջազգային չափորոշիչներին համապատասխան, հատկապես, երբ խոսքը բռնության գործողությունների «հրահրման» մասին է: Այս առումով, 20-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ պատերազմի քարոզչությունը պետք է արգելվի օրենքով. սա տարածվում է քարոզչության բոլոր ձևերի վրա, որոնք սպառնում կամ հանգեցնում են ագրեսիայի կամ խաղաղության խախտման արարքի, ինչը հակասում է ՄԱԿ-ի կանոնադրությանը:²² Խտրականության, թշնամանքի կամ բռնության (կամ «ատելության խոսքի» լուրջ ձևերի) հրահրումն արգելվում է ՔՔԻՄԴ-ի 20-րդ հոդվածի 2-րդ կետով, որը նշում է, որ «Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության օգտին որևէ ելույթ, որ խտրականության, թշնամանքի կամ բռնության ստորանք է, պետք է արգելվի օրենքով»: Ավելին, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի 4-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝²³ օրենքով պատժելի հանցանք են համարվում «ռասայական գերազանցության կամ ռասայական ատելության վրա հիմնված գաղափարների տարածումը, ռասայական խտրականության հրահրումը, ինչպես նաև ցանկացած ռասայի կամ մաշկի այլ գույն կամ էթնիկական այլ ծագում ունեցող անձանց խմբի դեմ ուղղված բռնության գործողությունները կամ դրանց հրահրումը»: ՔՔԻՄԴ-ի 20-րդ հոդվածի 2-րդ մասով և Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի 4-րդ հոդվածի «ա» կետով նախատեսված արգելքները նույնպես ենթակա են ՔՔԻՄԴ-ի 19-րդ հոդվածի 3-րդ մասի՝

²¹ ՄԻԵԴ, Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Handyside v. the United Kingdom) (ՄԻԵԴ 1976թ.) դիմում թիվ 5493/71, պարբ. 49:

²² ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 11. Հոդված 20. Պատերազմի քարոզչության և ազգային, ռասայական կամ կրոնական ատելության հրահրման արգելք, հուլիսի 29, 1983թ.

²³ Հայաստանը միացել է այս Կոնվենցիային 1993 թվականի հունիսի 23-ին:

արտահայտման ազատության սահմանափակումների վերաբերյալ խիստ պահանջներին,²⁴ ինչպես ընդգծված է վերը:

26. Մասնավորապես, բռնության ուղղակի և անմիջական հրահրման քրեական հետապնդումը թույլատրելի է,²⁵ եթե հանցագործության նյութական և մտավոր տարրերը հստակ սահմանված և սահմանափակված են օրենքով, և որևէ միջամտություն անհրաժեշտ և համաչափ է: Այսպիսի հրահրումը արգելվելու և օրենքով պատժվելու է միայն այն դեպքում, եթե այն պարունակում է ուղղակի և անմիջական հրահրման իմաստ, եթե՝ 1) արտահայտությունը նախատեսված է անխուսափելի բռնություն հրահրելու համար և 2) այն հավանաբար հրահրելու է նման բռնություն և 3) գոյություն ունի ուղղակի և անմիջական կապ արտահայտության և նման բռնության հավանականության կամ դրա տեղի ունենալու միջև. հարկ է հաշվի առնել մի շարք գործոններ՝ որոշելու, թե արդյոք արտահայտությունը բավականաչափ լուրջ է սահմանափակող իրավական միջոցների կիրառումը թույլատրելու համար, ներառյալ՝ համատեքստը, խոսողը (ներառյալ անհատի կամ կազմակերպության դիրքը աստիճանակարգությունում), մտադրությունը, բովանդակությունը կամ ձևը, խոսքի ծավալը և վնասի հավանականությունը (ներառյալ անխուսափելիությունը):²⁶
27. Համանմանորեն, ՄԻԵԴ-ը, ժողովրդավարական հասարակությունում արտահայտման ազատության իրացմանը քրեական վարույթի արդյունքում մեղադրական դատավճռի տեսքով միջամտության անհրաժեշտությունը գնահատելիս, հաշվի է առել մի շարք գործոններ, որոնք ներառում են հետևյալը՝ արդյոք հայտարարություններն արվել են լարված քաղաքական կամ սոցիալական ֆոնին, արդյոք նման հայտարարությունները,

²⁴ Տե՛ս ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի ԲԲԻՄԴ-ի 19-րդ հոդվածի վերաբերյալ թիվ 34 ընդհանուր մեկնաբանությունը, CCPR/C/GC/34, սեպտեմբերի 12, 2011թ., պարբերություն 11, և Ռասայական խտրականության վերացման կոմիտեի (ՌԽՎԿ) թիվ 35 ընդհանուր առաջարկությունը ռասիստական ատելության խոսքի դեմ պայքարի վերաբերյալ (2013), պարբերություններ 19-20:

²⁵ Տես, օրինակ՝ ՄԻԵԴ, *Ինջալն ընդդեմ Թուրքիայի (Incal v. Turkey)* [GC], թիվ 22678/93, 9 հունիսի 1998թ., պարբերություն 54, որտեղ նշվում է, որ «իրավասու պետական մարմինները, որպես հասարակական կարգի երաշխավորներ, կարող են ձեռնարկել միջոցառումներ, որոնք անգամ քրեական իրավունքի բնույթ կարող են ունենալ և նախատեսված են նման դիտողություններին պատշաճ կերպով և համաչափորեն արձագանքելու համար»: ՄԻԵԴ, *Սյուրեքը և Օզդեմիրն ընդդեմ Թուրքիայի (Süreş and Özdemir v. Turkey)* (թիվ 2)), թիվ 23927/94 24277/94, 8 հուլիսի 1999թ., պարբերություն 34, որտեղ նշվում է, որ պետություններն ունեն ավելի լայն հայեցողության շրջանակ՝ արտահայտման ազատությունը սահմանափակելու համար այն դեպքերում, երբ դիտողությունները բռնություն են հրահրում: *Ֆաթուլլան ընդդեմ Ադրբեյջանի (Fatullayev v. Azerbaijan)*, թիվ 40984/07, 22 ապրիլի 2010թ., պարբերություն 116, որտեղ նշվում է, որ եթե հրապարակումը չի հրահրում բռնություն էթնիկ ատելության հողի վրա, կառավարությունը չպետք է քրեական վարույթ հարուցի լրատվամիջոցների դեմ: *Մյուդյուր Դումանն ընդդեմ Թուրքիայի (Müdür Duman v. Turkey)*, թիվ 15450/03, 6 հոկտեմբերի 2015թ., պարբերություն 33, որով միջամտությունն անվավեր է ճանաչվել, քանի որ համապատասխան նյութերը, որոնց տիրապետման համար դիմողը դատապարտվել էր, բռնություն չէին քարոզում:

²⁶ Տե՛ս, օրինակ՝ Ռասայական խտրականության վերացման կոմիտե, Ընդհանուր հանձնարարական թիվ 35 (2013), պարբերություններ 13-16, տե՛ս նաև Ռաբաթի գործողությունների ծրագիրը՝ խտրականություն, թշամանք կամ բռնություն հրահրող ազգային, ռասայական կամ կրոնական ատելության քարոզչության արգելքի մասին և, Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության հրահրման արգելքի վերաբերյալ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի զեկույցում, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, 2013 թվականի հունվարի 11, Հավելված, պարբերություն 29, և Կարծիքի և արտահայտման ազատության հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկույցող, Լրատվամիջոցների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչ, Արտահայտման ազատության և տեղեկատվության հասանելիության հարցերով ԱՊԿ հատուկ զեկույցող և Աֆրիկյան հանձնաժողովի հատուկ զեկույցող (այսուհետ՝ «Արտահայտման ազատության վերաբերյալ միջազգային մանդատ ունեցող մարմիններ»), Արտահայտման ազատության և բռնի ծայրահեղականության դեմ պայքարի մասին համատեղ հռչակագիր (2016), պարբերություն 2(դ):

արդարացիորեն մեկնաբանվելով և իրենց անմիջական կամ ավելի լայն համատեքստում դիտարկվելով, կարող են դիտվել որպես բռնության ուղղակի կամ անուղղակի կոչ կամ բռնության արդարացում, ինչպես նաև հայտարարություններն անելու եղանակը, դրանց՝ վնասակար հետևանքների հանգեցնելու ուղղակի կամ անուղղակի կարողությունը, և պատժամիջոցների համաչափությունը:²⁷

28. ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումների վրա հիմնվելով՝ [Ատեկության խոսքի դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի CM/Rec\(2022\)16 հանձնարարականը](#) տարբերակում է հետևյալը՝ 1) քրեական օրենսդրությամբ արգելված «ատեկության խոսքը», 2) քրեական պատասխանատվության համար պահանջվող ծանրության մակարդակին չհասնող «ատեկության խոսքը», որը, սակայն, ենթակա է քաղաքացիական կամ վարչական իրավունքի նորմերին, և 3) վիրավորական կամ վնասակար արտահայտությունների տեսակները, որոնք ՄԻԵԿ-ով իրավաչափորեն սահմանափակվելու համար բավականաչափ ծանր չեն, սակայն, պահանջում են այլընտրանքային (ոչ օրենսդրական) արձագանքներ:²⁸ Արտահայտության ծանրությունը և պատասխանատվության տեսակը գնահատելու համար Հանձնարարականը հղում է անում հետևյալ գործոններին՝ արտահայտության բովանդակությանը, արտահայտությունն անելու պահին քաղաքական և սոցիալական համատեքստին, խոսողի մտադրությանը, խոսողի՝ հասարակությունում ունեցած դերին և դիրքին, արտահայտության տարածման կամ ուժգնացման եղանակին, արտահայտության՝ վնասակար հետևանքների հանգեցնելու կարողությանը, ներառյալ նման հետևանքների անխուսափելիությանը, լսարանի բնույթին և չափին, ինչպես նաև թիրախային խմբի բնութագրերին:²⁹

3.2. Երբ խոսքը կարող է զանցանք դառնալ

29. Յուրաքանչյուր աշխատանքային իրավիճակում աշխատողները որոշակի պարտականություններ և պատասխանատվություն ունեն իրենց գործատուի նկատմամբ: Հանրային պաշտոնյաներին վերաբերող համատեքստում այս պատասխանատվությունը բխում է, ի թիվս այլոց, հավատարմության, զսպվածության, հայեցողության, քաղաքավարության, հարգալիքության և քաղաքական չեզոքության պարտավորություններից: Ներդաշնակ աշխատանքային միջավայր ունենալու, կազմակերպության բարեվարքությունն ու հեղինակությունն ապահովելու անհրաժեշտությամբ գուցե պահանջվի, որ հանրային պաշտոնյաները հարեն տարբեր շահերի,

²⁷ Տե՛ս ՄԻԵԴ, *Իբրագիմ Իբրագիմովը և այլք ընդդեմ Ռուսաստանի (Ibragim Ibragimov and Others v. Russia)*, թիվ 1413/08 և 28621/11, օգոստոսի 28, 2018թ., մասնավորապես՝ պարբերություններ 98-99 և 115-124, իսկ այսպես կոչված «ծայրահեղական» հայտարարությունների վերաբերյալ՝ ՄԻԵԴ, *Ստոմախին ընդդեմ Ռուսաստանի (Stomakhin v. Russia)*, թիվ 52273/07, մայիսի 9, 2018թ.:

²⁸ Եվ Նախարարների կոմիտեի Հանձնարարական CM/Rec(2022)16 Ատեկության խոսքի դեմ պայքարի մասին, 20 մայիսի 2022թ., CM/Rec(2022)16), պարբերություն 3:

²⁹ Նույն տեղում, Ատեկության խոսքի դեմ պայքարի մասին CM/Rec(2022)16 հանձնարարական, պարբերություն 4, տե՛ս նաև պարբերություն 11, որը մանրամասնորեն ներկայացնում է ատեկության խոսքի արտահայտությունները:

որոնք էլ, թերևս, ձևավորեն ազատորեն արտահայտվելու նրանց կարողությունը:

30. Ինչպես նշել է ՄԻԵԴ-ը *Ահմեդը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության և Դե Դիեգո Նաֆրիան ընդդեմ Իսպանիայի* գործերում,³⁰ թեև քաղաքացիական ծառայողները պարտավոր են իրենց գործատուի նկատմամբ հավատարմություն, զսպվածություն և հայեցողություն ցուցաբերել, այդ պարտականությունը անսահման չէ, հատկապես այն պատճառով, որ քաղաքացիական ծառայողները կարող են իրենց աշխատանքի ընթացքում ծանոթանալ կամ տիրապետել տեղեկատվության, այդ թվում՝ գաղտնի տեղեկատվության, որի հրապարակումը կամ հանրայնացումը մեծապես հանրային շահերից է բխում: Հստակեցվեց, որ երբ գործատուն չի արձագանքում անօրինական գործելակերպին, չնայած աշխատողի կողմից դրա մասին իրեն հաղորդված տեղեկությանը, վերջինս այլևս պարտավոր չէ ցուցաբերել պայմանական հավատարմություն, զսպվածություն և հայեցողություն:³¹ Նմանապես, *Լանգներն ընդդեմ Գերմանիայի* գործում հաշվի է առնվել աշխատանքային հարցերի վերաբերյալ կարծիք հայտնելը, մասնավորապես՝ աշխատանքային պայմանների, դեկավարների և գործընկերների քննադատությունը: Նշվեց, որ այս արտահայտությունները պետք է թույլատրելի լինեն աշխատանքային իրավահարաբերությունները ձևավորելու համար, բայց կան այնպիսի սահմանափակումներ, ըստ որոնց աշխատողը պետք է շրջահայաց լինի և բնույթով աշխատանքային հանդիպման ժամանակ հանդես չգա անհիմն մեղադրանքներով, որոնք կարող են վնաս հասցնել գործատուի հեղինակությանը և խաթարել փոխադարձ վստահությունը, մասնավորապես՝ արտաքին կողմերի ներկայությամբ:³²
31. Հավատարմության և հայեցողության առումով կարևոր է, որ քաղաքացիական ծառայողները չանեն հայտարարություններ, որոնք կարող են խաթարել այն պետական մարմինների հեղինակությունը, որտեղ իրենք աշխատում են կամ ազդել այդ պետական մարմինների նկատմամբ հարգանքի վրա: Այս առումով մեկ այլ տարր է նրանց՝ ժողովրդավարական սկզբունքները, պետության սահմանադրական կարգը և իրավունքի գերակայությունը հարգելու պարտականությունը: Հետևաբար, կարելի է նրանց արտահայտություններում որոշակի չափավորություն ակնկալել: Այնուամենայնիվ, նման պարտավորությունները չեն կարող հանրային պաշտոն զբաղեցնող անձանց արտահայտման ազատության անհամաչափ սահմանափակումների հանգեցնել: Մեկ այլ հայեցակերպ, որը կարող է սահմանափակել Հանրային պաշտոնյայի ազատ արտահայտումը, քաղաքական չեզոքության պահանջն է:

³⁰ ՄԻԵԴ, *Ահմեդը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության (Ahmed and Others v. the United Kingdom)*, դիմում թիվ 65/1997/849/1056, 2 սեպտեմբերի 1998թ., պարբերություն 56; ՄԻԵԴ, *Դե Դիեգո Նաֆրիան ընդդեմ Իսպանիայի (De Diego Nafría v. Spain)*, դիմում թիվ 46833/9, 2002, պարբերություն 37:

³¹ ՄԻԵԴ, *Հայնիշն ընդդեմ Գերմանիայի (Heinisch v. Germany)*, դիմում թիվ 28274/08, 21 հուլիսի 2011, պարբերություն 73:

³² ՄԻԵԴ, *Լանգներն ընդդեմ Գերմանիայի (Langner v. Germany)*, դիմում թիվ 14464/11, 17 սեպտեմբերի 2015թ., պարբ. 51, տե՛ս նաև՝ ՄԻԵԴ, *Պալոմո Սանչեսը և այլք ընդդեմ Իսպանիայի (Palomo Sánchez and others v. Spain)*, դիմում թիվ 28955/06, 28957/06, 28959/06 and 28964/06, 12 սեպտեմբերի, 2011թ., պարբերություն 73, ՄԻԵԴ, *Ռայչինովն ընդդեմ Բուլղարիայի (Raichinov v. Bulgaria)*, 47579/99, 20 ապրիլի 2006թ., պարբ. 48–51, ՄԻԵԴ, *Ֆուենտես Բոբոն ընդդեմ Իսպանիայի (Fuentes Bobo v. Spain)*, դիմում թիվ 39293/98, 29 փետրվարի 2000թ., պարբերություններ 47–48:

Մա, ըստ էության, նշանակում է, որ հանրային պաշտոնյաները ձեռնպահ են մնում քաղաքական բնույթի այնպիսի տեսակետներ արտահայտելուց, որոնք կարող են խաթարել հանրային վարչակազմի նկատմամբ հանրային վստահությունը: *Ահմեդը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ «*հանրության անդամները նաև իրավունք ունեն ակնկալելու, որ իրենց քվեով ընտրովի պաշտոններ զբաղեցրած անձինք կկատարեն իրենց լիազորությունները ընտրարշավի ընթացքում ստանձնած պարտավորություններին համապատասխան, և որ այդ մանդատի իրականացումը չի խաթարվի՝ հանդիպելով այդ անդամների աշխատակազմերի քաղաքական ընդդիմությանը: Հարկ է նաև նշել, որ հանրության անդամները հավասարապես իրավունք ունեն ակնկալելու, որ տեղական ինքնակառավարման մարմինների հետ իրենց շփումներում նրանք գործ կունենան քաղաքականապես չեզոք պաշտոնյաների հետ, որոնք անմասն են քաղաքական պայքարից*»:³³

32. ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումները, ընդհանուր առմամբ, սահմանում են, որ անխուսափելիորեն և գիտակցաբար մանրակրկիտ քննության առարկա դառնալով՝ քաղաքական գործիչները պետք է ավելի մեծ հանդուրժողականություն ցուցաբերեն քննադատության հանդեպ, ի տարբերություն մասնավոր անձանց: Այս մոտեցումը ընդլայնվել և կիրառվել է նաև քաղաքացիական ծառայողների նկատմամբ: Օրինակ՝ *Յանովսկին ընդդեմ Լեհաստանի* գործում³⁴ ՄԻԵԴ-ը նշել է, որ ինչպես և քաղաքական գործիչների դեպքում, ի պաշտոնե հանդես եկող քաղաքացիական ծառայողների համար ընդունելի քննադատության սահմաններն ավելի լայն են, թեև նրանց նկատմամբ վերաբերմունքը չպետք է հավասարապես նույնական լինի: *Լը Պենն ընդդեմ Ֆրանսիայի* գործում ՄԻԵԴ-ը նաև հաստատել է, որ հանրային քննարկմանը մասնակցող անձինք կարող են դիմել որոշակի չափազանցության կամ նույնիսկ սադրանքի: *Մամերն ընդդեմ Ֆրանսիայի* գործում Դատարանը նշել է, որ չնայած չի կարելի ասել, որ քաղաքացիական ծառայողները գիտակցաբար ենթարկվում են յուրաքանչյուր խոսքի և գործի մանրակրկիտ քննության նույնչափ, որքան քաղաքական գործիչները, որոշակի դեպքերում ի պաշտոնե գործող քաղաքացիական ծառայողները ենթարկվում են քննադատության, որի ընդունելի սահմաններն ավելի լայն են, քան սովորական քաղաքացիների դեպքում: Այնուամենայնիվ, այս մոտեցումը չի տարածվում պետական մարմիններում որևէ պաշտոնեկան դիրքում աշխատող բոլոր անձանց վրա, և նշվում է, որ քաղաքացիական ծառայողներին տրամադրվող պաշտպանության պահանջները պետք է գնահատվեն մամուլի ազատության կամ հանրային շահին վերաբերող հարցերի շուրջ բաց քննարկման շահերի համատեքստում:³⁵ Միևնույն ժամանակ, քաղաքացիական ծառայողները պետք է հանրային վստահություն

33 ՄԻԵԴ, *Ահմեդը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* (*Ahmed and Others v. the United Kingdom*), դիմում թիվ 65/1997/849/1056, 2 սեպտեմբերի 1998թ., պարբերություն 53: Տե՛ս նաև՝ ՄԻԵԴ, *Ռեկվենյի ընդդեմ Հունգարիայի* (*Rekvényi v. Hungary* [GC]), դիմում թիվ 25390/94, պարբերություն 41, որը վերաբերում է ոստիկանության ծառայողներին:

34 ՄԻԵԴ, *Յանովսկին ընդդեմ Լեհաստանի* (*Janowski v. Poland*), դիմում թիվ 25716/94, 21 հունվարի 1999թ.:

35 ՄԻԵԴ, *Մամերն ընդդեմ Ֆրանսիայի* (*Mamere v France*), դիմում թիվ 12697/03, 7 նոյեմբերի 2006թ., պարբերություն 27:

վայելեն՝ անհարկի խաթարումներից զերծ պայմաններում, եթե նրանք պետք է հաջողությամբ կատարեն իրենց պարտականությունները, և, հետևաբար, գուցե անհրաժեշտ լինի նրանց պաշտպանել իրենց պարտականությունների կատարման ընթացքում վիրավորական և հարձակողական խոսքային հարձակումներից: Նույն կերպ, քաղաքացիական ծառայողները պետք է նաև պաշտպանված լինեն վիրավորական պարսավումներից:³⁶

33. Թեև արտահայտման ազատությունը սովորաբար երաշխավորվում է կանոնադրական իրավունքով և Սահմանադրություններով, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և քաղաքացիական ծառայողների վարքագիծն ու խոսքը կարող են կարգավորվել վարքագծի կանոնագրքերով կամ էթիկական չափորոշիչներով: Վարքագծի կանոնագրքերի հետ կապված սկզբունքների կիրառումը որոշակի իրավիճակում պետք է որոշվի մի շարք գործոններով, այդ թվում՝ նրանով, թե արդյոք հանրային պաշտոն զբաղեցնող անձը գործել է այդ դիրքից և ներկայացել է որպես մեկը, ով գործում է ի պաշտոնե, և արդյոք նա օբյեկտիվորեն կարող է ընկալվել որպես մեկը, ով գործում է հանրային պաշտոն զբաղեցնողի դիրքից (օրինակ՝ սոցիալական ցանցերում պետական մարմնին վերաբերող հարցերի մասին գրառումներ անելիս կամ այնպիսի միջոցառման մասնակցելիս, ուր հրավիրվել է որպես հանրային պաշտոն զբաղեցնող անձ): Հետևաբար, կարևոր է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք ունենան իրենց վարքագծին և խոսքին վերաբերող ուղեցույցներ, չնայած յուրաքանչյուր իրավիճակում հարկ է հավասարակշռություն ապահովել այն դեպքերում, երբ նման վարքագիծը կամ խոսքը կարող են բավականաչափ կոպիտ լինել, որպեսզի զանցանք որակվեն:
34. ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումներից կարելի է առանձնացնել մի քանի հայեցակերպեր, որոնք կարևոր է դիտարկել, երբ վարքագծի կանոնագիրքը կիրառվում է դրա՝ ենթադրյալ խախտում թույլ տված հանրային պաշտոն զբաղեցնող անձանց գործածած արտահայտությունների նկատմամբ: Ի սկզբանե պարզ է, որ ընտրված պաշտոնյաների խոսքն օգտվում է ավելի բարձր մակարդակի պաշտպանությունից՝ ժողովրդավարական խոսույթում վերջիններիս ունեցած դերի պատճառով, ինչպես կարելի է տեսնել *Կաստելյան ընդդեմ Իսպանիայի*³⁷ և *Լինգենսն ընդդեմ Ավստրիայի*³⁸ գործերում: Այս պաշտպանությունը տրամադրվում է նաև քաղաքացիական ծառայողներին, չնայած նրանց ունեցած կոնկրետ պատասխանատվությամբ ու պարտականություններով պայմանավորված՝ գուցե նրանց արտահայտություններում ավելի մեծ սահմանափակումների պահանջ առաջադրվի: ՄԻԵԴ-ը, իր քննության շրջանակներում, հաշվի է առնում այն հանգամանքները և ընդհանուր նախապատմությունը, որոնց համատեքստում արվել են արտահայտությունները: Վիճարկվող միջամտությունը Դատարանը

36 ՄԻԵԴ, *Վոյչիկն ընդդեմ Լեհաստանի* (Wojczyk v. Poland), դիմում թիվ 52969/13, 9 դեկտեմբերի 2021թ., պարբերություն 96:

37 ՄԻԵԴ, *Կաստելյան ընդդեմ Իսպանիայի* (Castells v. Spain), դիմում թիվ 11798/85, 23 ապրիլի 1992թ., շարք Ա թիվ 23: Տե՛ս նաև ՄԻԵԴ, *Կարաչոնին և այլք ընդդեմ Հունգարիայի* (Karácsony and Others v. Hungary [GC]), դիմումներ թիվ 42461/13 և 44357/13, 17 մայիսի 2016թ., պարբերություններ 133–137, որոնք վերաբերում էին Խորհրդարանում բողոքի ցույցի համար կարգապահական տույժի ենթարկված պատգամավորներին. ընտրված ներկայացուցիչների համար ուժեղացված հատուկ պաշտպանություն:

38 ՄԻԵԴ, *Լինգենսն ընդդեմ Ավստրիայի* (Lingens v. Austria), դիմում թիվ 9815/82 (ՄԻԵԴ 1986) շարք Ա թիվ 103:

դիտարկում է ամբողջ գործի լույսի ներքո՝ հատուկ կարևորություն տալով դիմողների զբաղեցրած պաշտոնին, նրանց հայտարարությունների ձևին և բովանդակությանը, և, մասնավորապես, այն համատեքստին, որում դրանք արվել են:

3.2.1. *Դիրք և համատեքստ*

35. Ընդհանուր առմամբ, ինչպես կրկնել է ՄԻԵԴ-ը *Գուջան ընդդեմ Մոլդովայի* գործում՝ «...10-րդ հոդվածը վերաբերում է նաև աշխատավայրին և նրան, որ քաղաքացիական ծառայողները [...] օգտվում են արտահայտման ազատության իրավունքից [...]: Միևնույն ժամանակ, Դատարանը հաշվի է առնում, որ աշխատողները պարտավոր են հավատարմություն, զսպվածություն և հայեցողություն ցուցաբերել իրենց գործատուի նկատմամբ: Սա հատկապես վերաբերելի է քաղաքացիական ծառայողներին, քանի որ քաղաքացիական ծառայության բնույթն ինքնին պահանջում է, որ քաղաքացիական ծառայողի համար պարտադիր լինի հավատարմության և հայեցողության պարտականությունը [...]: Քանի որ ժողովրդավարական հասարակությունում քաղաքացիական ծառայողների առաքելությունն է օգնել կառավարությանը իր գործառնությունների կատարման գործում, և քանի որ հանրությունն իրավունք ունի ակնկալել, որ նրանք կօգնեն և ոչ թե կխոչընդոտեն ժողովրդավարական ճանապարհով ընտրված կառավարությանը, հավատարմության և զսպվածության պարտականությունը նրանց համար հատուկ նշանակություն է ստանում [...]: Բացի այդ, հաշվի առնելով իրենց պաշտոնի բնույթը, քաղաքացիական ծառայողները հաճախ հասանելիություն են ունենում այն տեղեկատվությանը, որը կառավարությունը, տարբեր իրավաչափ պատճառներով, գուցե չահագրգիռ լինի պահել խորհրդապահական ռեժիմում կամ գաղտնի: Հետևաբար, քաղաքացիական ծառայողների համար պարտադիր հայեցողության պարտականությունը նույնպես ընդհանուր առմամբ խիստ պահանջ կլինի»:³⁹
36. Այսպիսով, կարևոր է, թե արդյոք հայտարարությունն արվել է պաշտոնական կամ մասնագիտական դիրքից, թե՞ մասնավոր դիրքից, ընդ որում վերջինս ավելի լայն պաշտպանության է արժանում, եթե այն ակնհայտորեն չի խաթարում պաշտոնական պարտականությունները: Այս պաշտպանությունը կարող է նաև տարբեր մակարդակի լինել՝ կախված յուրաքանչյուր գործառնությունից և պաշտոնից, և նրանից, թե որքանով կարող են արտահայտությունները համատեղվել քաղաքացիական ծառայողի կամ հանրային պաշտոն զբաղեցնող անձի գործառնության հետ: Բացի այդ, որոշ քաղաքացիական ծառայողներ պետական վարչակազմի ներկայացուցիչներ են և, հետևաբար, գուցե ավելի հաճախ շփվեն արտաքին կողմերի հետ, քան այլ քաղաքացիական ծառայողներ, հետևաբար, նախորդները կարող են ավելի

³⁹ ՄԻԵԴ, *Գուջան ընդդեմ Մոլդովայի* (*Guja v. Moldova* [GC]), դիմում թիվ 14277/04, 12 փետրվարի 2008թ., պարբերություններ 70-71:

բարձր պատասխանատվություն կրել իրենց արտահայտման ազատությունն իրացնելիս:

37. *Ռեկվենյին ընդդեմ Հունգարիայի* գործում ՄԻԵԴ-ը քննարկել է ոստիկանների համար կուսակցություններին անդամակցելու կամ քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը: Այստեղ Դատարանը ճանաչել է, որ հանրային ծառայությունում պաշտոն, հատկապես բարձրաստիճան պաշտոն զբաղեցնելը գործառույթների կատարման ընթացքում հանրային ծառայողների և պետության միջև վստահության և հավատարմության հատուկ կապի որոշակի ակնկալիքներ, ինչպես նաև քաղաքական չեզոքության իրավաչափ պահանջ է ենթադրում:⁴⁰ Դատարանը հատուկ ուշադրություն է դարձրել երկրի պատմական համատեքստին:
38. Ինչպես նշվեց, կարևոր է նաև այն համատեքստը կամ նախապատմությունը, որի ֆոնին արվել են հայտարարություններն ու արտահայտությունները: *Բական ընդդեմ Հունգարիայի* գործում Դատարանը նկատել է, որ դիմողը, որը իրավական բարեփոխումներից հետո Գերագույն դատարանի նախագահի պաշտոնից վաղաժամկետ հեռացված դատավոր էր, իր տեսակետներն ու քննադատություններն էր հայտնել դատական համակարգի վրա ազդող սահմանադրական և օրենսդրական բարեփոխումների, դատական համակարգի գործունեության և բարեփոխումների, դատավորների անկախության և անփոփոխելիության, ինչպես նաև դատավորների կենսաթոշակային տարիքի իջեցման վերաբերյալ, որոնք բոլորն էլ հանրային շահին վերաբերող հարցեր են, և եզրակացրել է, որ նրա հայտարարությունները ոչ ավելին են, քան զուտ մասնագիտական տեսանկյունից քննադատությունը:⁴¹
39. Այնուամենայնիվ, կարևոր է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձ լինելու հանգամանքը չպարտադրվի անձին որպես իր միակ կերպարը, և, հետևաբար, որպես այդպիսին փաստացիորեն չկարողանա զրկել նրան ազատ արտահայտվելու իրավունքից: Յուրաքանչյուր ոք պետք է ունենա իր մասնագիտական պաշտոնից դուրս և ոչ միայն իր տան կամ ընտանիքի սահմաններում, այլև հանրության մեջ ապրելու և անհատականությունը դրսևորելու հնարավորություն: Հետևաբար, չնայած հանրային պաշտոն զբաղեցնող անձինք կարող են ավելի մեծ սահմանափակումների տակ լինել իրենց պաշտոնական դիրքում/դերում իրենց ասելիքի առումով, նման սահմանափակումները չպետք է անհարկիորեն խանգարեն նրանց՝ աշխատավայրից դուրս սեփական կարծիք ունենալու և արտահայտվելու կարողությանը: Հակառակ դեպքում, դա կխաթարի նրանց արտահայտման ազատության իրավունքի բուն էությունը և, գուցե խաթարի նրանց անձնական կյանքի իրավունքը, որը պաշտպանված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով: Աշխատավայրից դուրս քաղաքական

⁴⁰ ՄԻԵԴ, *Ռեկվենյին ընդդեմ Հունգարիայի* (*Rekvenyi v. Hungary*), դիմում թիվ 25390/94, 20 մայիսի 1999թ., պարբերություններ 44, 47-48

⁴¹ ՄԻԵԴ, *Բական ընդդեմ Հունգարիայի* (*Baka v. Hungary [GC]*), դիմում թիվ 20261/12, 23 հունիսի 2016թ., պարբերություններ 170-173:

հայացքների արտահայտմանը միջամտության ծավալները գնահատելիս հարկ է հաշվի առնել նաև քաղաքացիական ծառայողի կոչումը և պաշտոնը և այն, թե արդյոք նման հայտարարությունները կարող են վնաս հասցնել պետական կառավարման համակարգի բարեկարգությանը:

3.2.2. Խոսքի ձևը և բովանդակությունը

40. Ազատ արտահայտման մեջ միջամտությունը կարող է արդարացված լինել այնոց իրավունքները, այդ թվում՝ վերջիններիս հեղինակությունը պաշտպանելու նպատակով: ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումներից կարելի է հասկանալ, որ բարձրաստիճան պաշտոնյաներին, քաղաքական գործիչներին և քաղաքացիական ծառայողներին ուղղված վիրավորանքի կամ զրպարտության դեպքում պաշտպանության ավելի ցածր մակարդակ է տրամադրվում՝ այլ անձանց հետ համեմատությամբ: Դատարանը հստակ նշել է, որ եվրոպական տարածքում բարոյականության միատեսակ ընկալում չկա, որը թույլ կտար պետություններին ավելի լավ դիրքից դատողություններ անել բարոյականության սահմանների վերաբերյալ,⁴² բարոյականության պաշտպանությունը սահմաններ ունի:⁴³ Ավելին, չնայած մասնագիտական վարքագծի կանոնադրերը կարող են նաև պարունակել հասարակական նորմերն առաջ մղելու և այլ կերպ խթանելու համար նախատեսված տարրեր, կիրառելի որևէ պարտավորության սահմանումը կասկածելի է, և հարկ է ուշադրության առնել մտահոգությունն այն հավանական կաշկանդող ազդեցության մասին, որը կարող է բխել բարոյական սահմանների ձևակերպումից, հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց խոսքի կարգավորումից և անհատի ինքնավարությանը միջամտելու ներուժից:
41. Կարևոր է նշել, որ ՄԻԵԴ-ը համարում է, որ հեղինակության պաշտպանությունն ավելի մեծ կշիռ ունի անհատների, քան «իրավաբանական անձանց» համար, քանի որ միայն անհատներն ունեն պահանջվող արժանապատվությունը, և այսպիսի պաշտպանությունն առանձնահատուկ ուշադրության է արժանի պետական մարմինների առնչությամբ:⁴⁴ Հավանական է, որ պաշտպանության այսքան բարձր մակարդակը պայմանավորված է հանրային շահի մասին բանավեճերին մասնակցությանը վերագրվող հատուկ կարևորությամբ և քաղաքական ելույթներին վերապահված բարձր մակարդակի պաշտպանությամբ:⁴⁵

⁴² ՄԻԵԴ, *Հենդիսայդ ընդդեմ Միացյալ Թագավորության (Handyside v. the United Kingdom)* (ՄԻԵԴ 1976) դիմում թիվ 5493/71, պարբերություն 48; ՄԻԵԴ, *Օտտո-Պրեմինգեր-Ինստիտուտ ընդդեմ Ավստրիայի (Otto-Preminger-Institut v. Austria)*, դիմում թիվ 13470/87, 20 սեպտեմբերի 1994թ., պարբերություն 56

⁴³ ՄԻԵԴ, *Հենդիսայդ ընդդեմ Միացյալ Թագավորության (Handyside v. the United Kingdom)* (ՄԻԵԴ 1976) դիմում թիվ 5493/71, պարբերություն 48, ՄԻԵԴ, *Նորրիս ընդդեմ Իռլանդիայի (Norris v Ireland)*, դիմում թիվ 10581/83, 26 հոկտեմբերի 1988թ., պարբերություն 45, ՄԻԵԴ *Open Door and Dublin Well Woman- ընդդեմ Իռլանդիայի (Open Door and Dublin Well Woman v. Ireland)*, պարբերություն 70

⁴⁴ ՄԻԵԴ, *Ֆրեյթաս Դանգելն ընդդեմ Պորտուգալիայի (Freitas Rangel v. Portugal)*, դիմում թիվ 78873/13, 11 հունվարի 2022թ., պարբերություն 53

⁴⁵ ՄԻԵԴ, *Կաստելլոն ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain)*, դիմում թիվ 11798/85, 23 ապրիլի 1992թ., Շարք Ա թիվ 23, պարբերություն 43, *Ուինգրովն ընդդեմ Միացյալ Թագավորության (Wingrove v. the United Kingdom)*, դիմում թիվ 17419/90, 25 նոյեմբերի 1996թ., պարբերություն 58

42. *Մամերն ընդդեմ Ֆրանսիայի* գործում⁴⁶ ՄԻԵԴ-ը նշել է, որ չնայած հանուրի շահի վերաբերյալ հանրային քննարկումներին մասնակցող անձինք չպետք է անցնեն որոշակի սահմաններ, մասնավորապես՝ ուրիշների հեղինակության և իրավունքների նկատմամբ հարգանքի առումով, որոշակի չափով չափազանցությունը կամ նույնիսկ սադրանքը թույլատրելի է: Քաղաքացիական ծառայողներին պաշտպանելու պահանջը պետք է համեմատվի մամուլի ազատության կամ հանրային շահին վերաբերող հարցերի շուրջ բաց քննարկման շահերի հետ: Դատարանը այս գործում նշել է, որ դիմողի կողմից արված հայտարարությունները հանրային շահն էին ներկայացնում, դիմողն այս հայտարարություններն արել է որպես ընտրված ներկայացուցիչ, ուստի դրանք ենթակա են եղել ավելի բարձր մակարդակի պաշտպանության: Դատարանը նաև նշել է, որ հանրային շահին վերաբերող հարցի շուրջ հանրային բանավեճի մասնակիցները ունեն որոշ չափով անգուսպ հայտարարություններ անելու իրավունք, և որ այս իրավիճակում մեկնաբանությունները եղել են սարկաստիկ, բայց մնացել են ընդունելի չափազանցման կամ սադրանքի սահմաններում: Հետևաբար, Դատարանը դրանք չի համարել ակնհայտորեն վիրավորական, հատկապես այն պատճառով, որ վիրավորական հայտարարությունները պետք է դրվեին հեռուստատեսային ծրագրի ընթացքում կարծիքների փոխանակման համատեքստի մեջ, ընդ որում, հեռուստատեսային ծրագիրն ավելի շատ ժամանցային էր, քան լրատվական: Ի վերջո, Դատարանը նաև հաշվի է առել այն փաստը, որ քննադատության ենթարկված անձը հանրային պաշտոն զբաղեցնող անձ էր, չնայած այն բանին, որ նա այլևս չէր աշխատում: Դատարանը շեշտեց, որ քաղաքացիական ծառայողները պետք է անհարկի խաթարումներից զերծ պայմաններում վայելեն հանրային վստահություն, եթե ակնկալվում է, որ նրանք պետք է հաջողությամբ կատարեն իրենց պարտականությունները: Հնարավոր է ծառայության ընթացքում նրանց վիրավորական խոսքային հարձակումներից պաշտպանելու անհրաժեշտություն առաջանա: Սա նաև վերաբերում է պարտականությունների կատարման ընթացքում արված գործողությունների մասին գրպարտչական մեղադրանքներին: Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ քաղաքացիական ծառայողների՝ իրենց պարտականությունների կատարման հետ կապված բոլոր քննադատությունների համար պատիժը համատեղելի է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի հետ: *Յանովսկուն* հղում անելով՝ Դատարանը նշեց, որ որոշ դեպքերում պաշտոնեական դիրքից գործող քաղաքացիական ծառայողների վերաբերմամբ ընդունելի քննադատության սահմաններն ավելի լայն են, քան սովորական քաղաքացիների վերաբերմամբ:
43. Ընդհանուր առմամբ, Դատարանը տարբերակում է խոսքի այն տեսակները, որոնցում քաղաքական խոսքին տրվում է ավելի մեծ պաշտպանություն՝ արհմիության նախագահին վերաբերող *Ջեյլանն ընդդեմ Թուրքիայի* գործի

⁴⁶ ՄԻԵԴ, *Մամերն ընդդեմ Ֆրանսիայի (Mamere v France)*, դիմում թիվ 12697/03, 7 նոյեմբերի 2006թ., պարբերություն 39

- հիմքով:⁴⁷ Քաղաքական համատեքստում հանդուրժվում է ոչ չափավոր, վիրավորական, ցնցող, անհանգստացնող, չափազանցված, սադրիչ, բանավեճային, գունեղ, զգացմունքային, ոչ ռացիոնալ և ագրեսիվ խոսքի որոշակի աստիճան, որը ընդունելի չէր լինի այդ համատեքստից դուրս: ՄԻԵԴ-ը նշել է, որ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածը պաշտպանում է արտահայտման բոլոր ձևերը, բայց տեղեկատվության տարածման միջոցները նշանակություն կարող են ունենալ՝ որոշելու համար, թե արդյոք իրավասու մարմնի կողմից արտահայտման ազատությունը սահմանափակելու համար ձեռնարկված միջոցները համաչափ են հետապնդվող իրավաչափ նպատակին, թե ոչ: Այնուամենայնիվ, նույնիսկ եթե մեկնաբանություններն արվում են հանրային շահին վերաբերող հարցի շուրջ ծավալված բանավեճի շրջանակներում, արտահայտման ազատության իրավունքը սահմանափակվում է, երբ վտանգված է անհատի հեղինակությունը:⁴⁸ Քաղաքավարությունը, հարգալիությունը, նրբանկատությունը և զսպվածությունը կարող են ներառվել «հանրային բարոյականություն» հասկացության մեջ, եթե հիմք ընդունվի հայեցողության լայն շրջանակը, ինչպես *Raëlien շվեյցարական շարժումն ընդդեմ Շվեյցարիայի* գործում:⁴⁹ *Բուսուիոկն ընդդեմ Մոլդովայի* գործում, որտեղ խոսքը վերաբերում էր մամուլի աշխատակցի կողմից պետության կամ պետական ընկերություններում աշխատող անձանց մասին տեղեկատվության հրապարակմանը, ՄԻԵԴ-ը նշել է, որ նույնիսկ եթե մեկնաբանություններն արվում են հանրային շահին վերաբերող հարցի շուրջ ծավալված բանավեճի շրջանակներում, արտահայտման ազատության իրավունքը սահմանափակումների է ենթարկվում, եթե վտանգված է անհատի հեղինակությունը:⁵⁰
44. Երբ խոսքը գնում է զրպարտության մասին, սովորաբար ՄԻԵԿ-ի 10-րդ և 8-րդ հոդվածների միջև փոխազդեցություն և որոշակի լարվածություն է ի հայտ գալիս: Օրինակ՝ *Axel Springer AG ընդդեմ Գերմանիայի* գործում⁵¹ «ծանրության շեմը» գերազանցվել է այնպես, որ վնաս է հասցվում ենթադրաբար զրպարտված անձի՝ անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքից օգտվելուն: Մյուս գործերի մեծ մասն այնուհետ կքննարկվի դեպք առ դեպք՝ ՄԻԵԿ-ի 8-րդ և 10-րդ հոդվածների միջև «իրավունքների հավասարակշռման» միջոցով,⁵² և ՄԻԵԴ-ի կողմից դիտարկումը կախված կլինի նրանից, թե արդյոք ներպետական դատարանը ձգտել է հավասարակշռություն հաստատել, թե

⁴⁷ ՄԻԵԴ, *Ջեյլանն ընդդեմ Թուրքիայի (Ceylan v. Turkey [GC])*, դիմում թիվ 23556/94, 8 հուլիսի 1999թ., պարբերություն 34

⁴⁸ 4.7; ՄԻԵԴ, *Բուսուիոկն ընդդեմ Մոլդովայի (Busuic v. Moldova)*, դիմում թիվ 61513/00, 21 սեպտեմբերի 2004թ., պարբերություն 42

⁴⁹ ՄԻԵԴ, *Raëlien շվեյցարական շարժումն ընդդեմ Շվեյցարիայի (Mouvement Raëlien suisse v. Switzerland [GC])*, դիմում թիվ 16354/06, 13 հուլիսի 2012թ., պարբերություն 76

⁵⁰ ՄԻԵԴ, *Բուսուիոկն ընդդեմ Մոլդովայի (Busuic v. Moldova)*, դիմում թիվ 61513/00, 21 սեպտեմբերի 2004թ., պարբերություն 69

⁵¹ ՄԻԵԴ, *Springer AG ընդդեմ Գերմանիայի (Springer AG v. Germany [GC])*, դիմում թիվ 39954/08, 7 փետրվարի 2012թ., պարբերություն 83

⁵² ՄԻԵԴ, *Փերինչեկն ընդդեմ Շվեյցարիայի (Perinçek v. Switzerland [GC])*, դիմում թիվ 27510/08, 15 հոկտեմբերի 2015թ., պարբերություն 198

ոչ:⁵³ ՄԻԵԴ-ը իր սեփական գնահատումը ձեռնարկում է միայն դրա համար լուրջ հիմքերի առկայության դեպքում:⁵⁴

45. Արտահայտման ազատության իրավունքն անձնական կյանքի իրավունքի հետ հավասարակշռելու համար Դատարանը *Ակսել Մփրինգերի* գործում սահմանված վեց չափանիշներ է գործածում՝ հանրային շահին առնչվող հարցի քննարկմանը բերած ներդրումը, տուժած անձի վարկաբեկման աստիճանը, լրատվական հաղորդման առարկան, տվյալ անձի՝ նախկինում դրսևորած վարքագիծը, հրապարակման բովանդակությունը, ձևը և հետևանքները, և, անհրաժեշտության դեպքում, լուսանկարներն անելու հանգամանքները: Դատարանը յուրաքանչյուր դեպքում քննարկում է, թե արդյոք այսպես սահմանված չափանիշները կարող են կիրառվել խնդրո առարկա գործում, չնայած որոշակի չափանիշներ կարող են ավելի կամ պակաս վերաբերելի լինել՝ հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները:

3.2.3. Փաստեր և կարծիքներ

46. Զրպարտության գործերով գնահատվող ամենակարևոր հայեցակերպերից մեկը տեղեկատվության (փաստերի) և կարծիքների (գնահատողական դատողությունների) տարբերակումն է: Կարծիքները, քննադատությունը և ենթադրությունները նույնպես պաշտպանված են ՄԻԵԿ 10-րդ հոդվածով, նույնիսկ եթե դրանց իսկությունը չի կարող ապացուցվել: Մասնավորապես, գնահատողական դատողությունները, հատկապես քաղաքական խոսույթում, ստանում են հատուկ պաշտպանություն, քանի որ դրանք կարևոր են կարծիքների բազմազանությունն ապահովելու համար, ինչը հիմնարար նշանակություն ունի ժողովրդավարական հասարակությունում: Փաստերի և կարծիքների միջև տարբերակումը և վերջիններիս համար ճշմարտության ապացույց պահանջելու արգելքը գնալով ավելի մեծ նշանակալիություն են ստանում իրավական համակարգերում, որտեղ ճշմարտությունն ապացուցելը դեռևս պահանջվում է «վիրավորանքի» դեպքերում՝ մեղադրանք, որը սովորաբար վերաբերում է անձնական տեսակետների և կարծիքների արտահայտմանը:⁵⁵ Հաշվի առնելով ՄԻԵԴ-ի կողմից կարծիքի և փաստերի տարբերակումը՝ ապացույց չպետք է պահանջվի, երբ արտահայտությունը կարծիքին է վերաբերում:
47. *Երուսաղեմն ընդդեմ Ավստրիայի* գործում ՄԻԵԴ-ը տարբերակեց այս երկուսը՝ նշելով, որ «...փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, մինչդեռ գնահատողական դատողությունների ճշմարտացիությունը ապացուցման ենթակա չէ»:⁵⁶ Գնահատողական դատողության ճշմարտացիությունն ապացուցելու պահանջը անհնար է կատարել և խախտում է կարծիքի

⁵³ ՄԻԵԴ, *MGN Limited ընդդեմ Միացյալ Թագավորության (MGN Limited v. the United Kingdom)*, դիմում թիվ 39401/04, 18 հունվարի 2011, պարբերություն 150

⁵⁴ ՄԻԵԴ, *Փերինգերն ընդդեմ Շվեյցարիայի (Perinçek v. Switzerland [GC])*, դիմում թիվ 27510/08, 15 հոկտեմբերի 2015թ., պարբերություններ 274-279

⁵⁵ Եվրոպայի խորհուրդ, Արտահայտման ազատության իրավունքի պաշտպանություն, էջեր 78-79

⁵⁶ ՄԻԵԴ, *Երուսաղեմն ընդդեմ Ավստրիայի (Jerusalem v. Austria)*, դիմում թիվ 26958/95, 27 փետրվարի 2001թ., պարբերություն 42

ազատությունն ինքնին, որը ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով ապահովված իրավունքի հիմնարար մասն է կազմում: *Լոմբարդոն ընդդեմ Մալթայի*⁵⁷ գործում ՄԻԵԿ-ը նշել է, որ իրավասու ազգային մարմիններին պետք է տրվի հայեցողության շատ նեղ շրջանակ՝ հանրային շահին առնչվող հարցերի շուրջ քննարկումները սահմանափակելու համար: Քաղաքական համատեքստում մեկնաբանությունները, որոնք համարժեք են գնահատողական դատողությունների, հանդուրժվում են, նույնիսկ եթե դրանք ճշմարիտ չեն, քանի դեռ դրանց համար որոշակի կամ որևէ փաստական հիմք կա: Նույնիսկ փաստին վերաբերող հայտարարությունը թույլատրելի կհամարվի, եթե արտահայտվածն ասվել է բարեխղճորեն, և կա որոշակի ողջամիտ (անգամ սխալ) փաստական հիմք՝ այն ասելու համար: Այն հատկանշական կերպով պատճառաբանել է, որ փաստին վերաբերող հայտարարության և գնահատողական դատողության միջև տարբերությունը պակաս կարևոր է, եթե հայտարարությունները արվել են աշխույժ քաղաքական բանավեճի ընթացքում:⁵⁸

3.2.4. Հանրային շահին առնչվող հարցեր

48. Ինչպես նշվեց վերը, ՄԻԵԿ-ի նախադեպային որոշումները ցույց են տալիս հիմնարար կոնսենսուս այն մասին, որ հանրային ծառայողների արտահայտվելու ազատության սահմանը կորոշվի տարբեր գործոնների հիման վրա, թեև ամենաակնառու գործոններից մեկն այն է, թե արդյոք խնդրո առարկա հարցը մեծ նշանակություն ունի հանրային շահի տեսանկյունից, թե ոչ: Կոշտ կամ մեծ լարվածություն պարունակող ձևակերպումները դեռևս կարող են ներառվել պաշտպանության տակ գտնվող արտահայտման շրջանակի մեջ. թե մինչև ուր է հասնում այդ պաշտպանությունը, կախված է ինչպես միջավայրից, այնպես էլ դիտողությունների նպատակից: Երբ բանավեճը կենտրոնանում է հանրային շահին առնչվող հարցերի վրա, հատկապես քաղաքական քննարկումների, ընտրարշավների կամ կառավարությունների, քաղաքական գործիչների կամ պետական մարմինների հասցեին ուղղված քննադատության թեժ պահին, ելույթ ունեցողներին ավելի մեծ ազատություն է տրվում՝ սուր կամ խայթող բառեր օգտագործելու համար:
49. Ինչ վերաբերում է քաղաքացիական ծառայողների՝ հանրային ըմբռնմանը և հաշվետվողականությանը նպաստելու կարողությանը, նրանց արտահայտման անհարկի լայն սահմանափակումները կխաթարեն արտահայտման ազատության իրավունքի բուն էությունը: ՄԻԵԿ-ը համարել է, որ քաղաքացիական ծառայողները կարող են արժեքավոր ներդրում ունենալ հանրային ըմբռնման գործում և քննարկումներում, քանի որ նրանք ունեն

⁵⁷ ՄԻԵԿ, *Լոմբարդոն և այլք ընդդեմ Մալթայի* (*Lombardo and others v Malta*), դիմում թիվ 7333/06, 24 ապրիլի 2007թ., պարբերություններ 55-58

⁵⁸ ՄԻԵԿ, *Լոմբարդոն և այլք ընդդեմ Մալթայի* (*Lombardo and others v Malta*), դիմում թիվ 7333/06, 24 ապրիլի 2007թ., պարբերություններ 55-58

գիտելիք և փորձ, որոնք կարող են հիմք հանդիսանալ հանրային քննարկումների համար և հարստացնել դրանք: Քաղաքացիական ծառայողների հայտարարությունները, եթե դրանք վերաբերում են հանրային շահին առնչվող հարցերին, կարող են օգտվել բարձր մակարդակի պաշտպանությունից:⁵⁹

50. *Կուդեշկինան ընդդեմ Ռուսաստանի* գործում ՄԻԵԴ-ը նշել է, որ հրապարակային քննադատության պատճառով դատավորի՝ պաշտոնից ազատումը նրա արտահայտման ազատության խախտում է: Դատարանը որոշել է, որ «*նա հանրային շահին առնչվող շատ կարևոր հարց է բարձրացրել, որը պետք է բաց լինի ժողովրդավարական հասարակությունում ազատ քննարկման համար*»:⁶⁰ Նմանատիպ պատճառաբանություն է տրվել նաև *Հայնիշն ընդդեմ Գերմանիայի* գործում, որտեղ հաստատվել է, որ պետական մասնակցությամբ ընկերությունում տարեցների համար ինստիտուցիոնալ խնամքի ապահովման վերաբերյալ հրապարակային քննադատության պատճառով ծերանոցի բուժքրոջ ազատումը հավասարազոր է նրա արտահայտման ազատության իրավունքի խախտմանը: Վճռվել է, որ «*պետական մասնակցությամբ ընկերության կողմից տարեցների համար ինստիտուցիոնալ խնամքի տրամադրման թերությունների մասին տեղեկացված լինելու հանրային շահն այնքան կարևոր է ժողովրդավարական հասարակությունում, որ այն գերազանցում է վերջինիս գործարար համբավը և շահերը պաշտպանելու շահը*»:⁶¹ Նույնիսկ *Բուքուրը և Թոման ընդդեմ Ռումինիայի* գործում որոշվել է, որ Ռումինիայի հետախուզական ծառայության և դրա անօրինական գործունեության վերաբերյալ գերզադտնի տեղեկատվության բացահայտումը «*այնքան կարևոր [էր] ժողովրդավարական հասարակությունում, որ գերազանցում է այդ հաստատության նկատմամբ հանրության վստահությունը պահպանելու շահը*»:⁶²
51. Այս առումով կարևոր է, թե արդյոք բարձրացված հարցը վերաբերում է հանրային շահի կարևոր հարցի և դուրս է գալիս մասնավոր բնույթի հարցի սահմաններից: Սա կարող է վերաբերել «... *այնպիսի հարցերի, որոնք ազդում են հանրության վրա այնքանով, որ վերջինս կարող է իրավաչափ կերպով հետաքրքրվել դրանցով՝ ուշագրավ կամ էականորեն վերաբերելի հանգամանքի բերումով, հատկապես որովհետև այդ հարցերն ազդում են քաղաքացիների բարեկեցության կամ համայնքի կյանքի վրա: Նույնը վերաբերում է նաև այն հարցերին, որոնք կարող են զգալի հակասություններ առաջ բերել և վերաբերում են կարևոր սոցիալական խնդրի կամ ներառում են այնպիսի խնդիր, որի մասին տեղեկացվածությունը կրիսեր հանրության*

⁵⁹ ՄԻԵԴ, *Նիլսենը և Ջոնսենն ընդդեմ Նորվեգիայի (Nilsen and Johnsen v. Norway)*, դիմում թիվ 23118/93, 25 նոյեմբերի 1999թ., պարբերություն 47

⁶⁰ ՄԻԵԴ, *Կուդեշկինան ընդդեմ Ռուսաստանի (Kudeshkina v. Russia)*, դիմում թիվ 29492/05, 26 փետրվարի 2009թ., պարբերություն 94

⁶¹ ՄԻԵԴ, *Հայնիշն ընդդեմ Գերմանիայի (Heinisch v. Germany)*, դիմում թիվ 28274/08, 21 հուլիսի 2011թ., պարբերություն 90

⁶² ՄԻԵԴ, *Բուքուրը և Թոման ընդդեմ Ռումինիայի (Bucur and Toma v. Romania)*, դիմում թիվ 40238/02, 8 հունվարի 2013թ., պարբերություն 115

շահից...»:⁶³ Կարևոր է նաև հաշվի առնել բացահայտման կամ արտահայտման պատճառները՝ արդյոք դա բացառապես կոշտ քննադատություն էր,⁶⁴ թե անհիմն անձնական հարձակում:⁶⁵

52. Թեև հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից իր պարտականությունների վերաբերյալ արտահայտության ցանկացած գնահատական կարող է որոշվել միայն յուրաքանչյուր գործի հանգամանքների հիման վրա, կարևոր է, որ այդ պարտականությունների կիրառումը չհանգեցնի նրան, որ պետական հատվածի նկատմամբ որևէ քննադատություն որակվի որպես պարտականությունների խախտում: Հանրային ծառայողները կարող են տիրապետել որոշակի տեղեկատվության, որը կարող է մեծ նշանակություն ունենալ հանրության համար, բայց կաշկանդված լինել պետական հատվածի հեղինակությունը պաշտպանելու պարտականությամբ: Ծանր իրավիճակներում, երբ անհրաժեշտ է անհապաղ գործել, հանրային ծառայողները պետք է ունենան հնարավորինս արագ համապատասխան տեղեկատվությունը տրամադրելու կարողությունը:

4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

53. Ներկայիս տեխնոլոգիական զարգացումների շնորհիվ սոցիալական ցանցերի հարթակները կարող են, ի տարբերություն ավանդական լրատվամիջոցների, ասելիքի բովանդակության համար ավելի մեծ տարածում ապահովել: Սոցիալական ցանցերի օգտագործումը ազատ արտահայտման և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց պարտականությունների հատկապես բազմաբարդ խաչմերուկ է: Թեև հանրային պաշտոն զբաղեցնող անձինք պահպանում են իրենց արտահայտման ազատության իրավունքը, նրանց առցանց գործունեությունը, հատկապես նրանց պաշտոնեական պարտականությունների հետ առնչությամբ, կարող է ենթարկվել սովորական անձանց գործունեությանը վերաբերողներից տարբերվող իրավական նկատառումների: Առցանց տարածքը տեղեկատվական և հաղորդակցական գործիք է, որը հատկապես տարբերվում է տպագիր լրատվամիջոցներից՝ հատկապես տեղեկատվությունը պահպանելու և փոխանցելու հնարավորության առումով:
54. 2022 թվականին Եվրոպայի խորհրդի Նախարարների խորհուրդը հանձնարարականներ է ներկայացրել ատելության խոսքի դեմ պայքարի վերաբերյալ: Այդ հանձնարարականները հանրային պաշտոն զբաղեցնող

⁶³ ՄԻԵԴ, *Բալասկաս ընդդեմ Հունաստանի* (*Balaskas v. Greece*), դիմում թիվ 73087/17, 5 նոյեմբերի 2020թ., պարբերություն 44

⁶⁴ ՄԻԵԴ-ում *Պրեդոտան ընդդեմ Ավստրիայի* (*Predota v. Austria*), դիմում թիվ 28962/95 գործում Դատարանը դիտարկում է այն հարցը, թե արդյոք դիմողի՝ աշխատանքից ազատմանը հանգեցրած հավատարմության խախտման անհարկիորեն խոչընդոտել է դիմողի ազատ արտահայտման իրավունքին և նշել է, որ Ավստրիայի ազգային երկաթուղու աշխատակցի՝ դիմողի կողմից արված հայտարարությունները խստորեն և հրապարակայնորեն քննադատել են իր գործատուի ծառայություններն ու աշխատանքը այնպես, որ դա կարող էր վնասել վերջինիս հեղինակությանը հաճախորդների աչքում:

⁶⁵ ՄԻԵԴ, *Պալոմո Սանչեսը և այլք ընդդեմ Իսպանիայի* (*Palomo Sánchez and others v. Spain*), դիմում թիվ 28955/06, 28957/06, 28959/06 և 28964/06, 12 սեպտեմբերի 2011թ., պարբերություն 73

անձանց խոսքին վերաբերող բաժիններ են պարունակում: Հատկանշական է, որ հանձնարարականները վերաբերում են ոչ միայն մասնագիտական հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, այլև օրենսդիր մարմինների, կառավարության, դատական համակարգի և այլ պետական մարմիններում աշխատող քաղաքական գործիչների: 28-րդ և 29-րդ կետերը նշում են, որ այս պաշտոնյաները պետք է «խուսափեն ատելության խոսքին մասնակցությունից, դրան հավանություն տալուց կամ այն տարածելուց... [և] պետք է հրապարակայնորեն խթանեն մարդու իրավունքների մշակույթը և վճռականորեն և անհապաղ դատապարտեն ատելության խոսքը՝ հարգելով խոսքի և տեղեկատվության ազատությունը, ներառյալ քննադատությունը և տեղեկատվությունը, որը կարող է վիրավորել, ցնցել կամ անհանգստացնել պետությանը կամ բնակչության որևէ հատվածի»:⁶⁶ 29-րդ կետը խրախուսում է վարքագծի կանոնագրքի ներդրումը՝ ներքին բողոքարկման և տույժերի ընթացակարգով խորհրդարանների, այլ ընտրովի մարմինների և քաղաքական կուսակցությունների համար: Բացատրագիրն ուշադրություն է հրավիրում մասնավորապես *Հենդիսայդի* գործի վրա,⁶⁷ ինչպես նաև անհանդուրժողականությունը խթանող կամ խրախուսող քաղաքական ելույթներից զերծ մնալու կարևորության վրա, մասնավորապես՝ ընտրությունների ժամանակահատվածում:⁶⁸

55. Նմանապես, ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումները, միաժամանակ ընդունելով համացանցի առավելությունները, ճանաչում են, որ դրանք ուղեկցվում են մի շարք մարտահրավերներով այն առումով, որ ակնհայտ անօրինական խոսքը, ներառյալ՝ զրպարտչական դիտարկումները, ատելության խոսքը և բռնություն հրահրող խոսքը կարող են աննախադեպ կերպով տարածվել ամբողջ աշխարհում, վայրկյանների ընթացքում, և երբեմն մշտապես հասանելի մնալ առցանց:⁶⁹ Այն ընդունել է, որ էլեկտրոնային ցանցը, որը սպասարկում է աշխարհի բոլոր հատվածներում գտնվող միլիարդավոր օգտատերերի, չի ենթարկվում և հնարավոր է երբեք էլ չենթարկվի նույն կարգավորումներին և վերահսկողությանը, և որ տպագիր լրատվամիջոցներից և ինտերնետից նյութերի վերարտադրությունը կարգավորող կարգերը կարող են տարբեր լինել: Հետևաբար, վերջիններիս նկատմամբ կիրառվող կանոններն անհերքելիորեն պետք է ճշգրտվեն՝ այս տեխնոլոգիայի առանձնահատկություններին համապատասխան՝ հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ու խթանումն ապահովելու համար:⁷⁰ Թեև յուրաքանչյուր իրավիճակի համար, անկախ օգտագործվող միջոցից,

⁶⁶ Եվրոպայի խորհուրդ, Նախարարների կոմիտե, CM/Rec(2022)16 - Ատելության խոսքի դեմ պայքարի մասին Նախարարների կոմիտեի հանձնարարականը անդամ պետություններին, 20 մայիսի 2022թ.

⁶⁷ Եվրոպայի խորհուրդ, Ատելության խոսքի դեմ պայքարի մասին Նախարարների կոմիտեի CM/Rec(2022)16 հանձնարարականը անդամ պետություններին, պարբերություն 116

⁶⁸ CM/Rec(2022)16, պարբերություններ 118-119

⁶⁹ ՄԻԵԴ, *Delfi AS-ը ընդդեմ Էստոնիայի* (Delfi AS v. Estonia [GC]), դիմում թիվ 64569/09, 16 հունիսի 2015թ., պարբերություն 110, ՄԻԵԴ, *Աննենը ընդդեմ Գերմանիայի* (Annen v. Germany), դիմում թիվ 2373/07 և 2396/07, 30 մարտի 2010թ., պարբերություն 67

⁷⁰ ՄԻԵԴ, *Պրավոյե դելոյի խմբագրակազմը և Շտեկելը ընդդեմ Ուկրաինայի* (Editorial Board of Pravoye Delo and Shtekel v. Ukraine), դիմում թիվ 33014/05, 5 մայիսի 2011թ., պարբերություն 63

որոշակի արտահայտության պաշտպանվածությունը կամ չպաշտպանվածությունը որոշելու համար տարբեր գործոնների գնահատում է պահանջվում, ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պաշտպանությունը չի տարածվում ռասայական խտրականություն և ատելություն հրահրող հայտարարությունների վրա:

56. Մոցիալական ցանցերի պատճառով հանրային և քաղաքական խոսույթի առջև ծառացած հիմնական մարտահրավերներից մեկը դրանց օգտագործումն է ապատեղեկատվության տարածման նպատակով: Ապատեղեկատվությունը կեղծ տեղեկատվություն է, որը միտումնավոր ստեղծվել է անձին, սոցիալական խմբին, կազմակերպությանը կամ երկրին վնասելու համար:⁷¹ Հաճախ շեշտը դրվել է Covid-19 համավարակի ընթացքում ապատեղեկատվության հետ կապված վնասի վրա, բայց վերջին տարիներին այն նաև վերաբերում է պետական պաշտոնյաների տեսակետների ճնշմանը աստվածանարգության և ցեղասպանության ժխտման հետ կապված թեմաներով:⁷² Իր զեկույցում ՄԱԿ-ի կարծիքի և արտահայտման ազատության իրավունքի խթանման և պաշտպանության հարցերով հատուկ զեկույցողը նշել է, որ «*չափազանց մեծ հայեցողություն նախատեսող և որոշակիության բարձր մակարդակ չունեցող օրենքները, կարող են հանգեցնել կամայական որոշումների կայացման և անհամատեղելի են Դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ կետի հետ*»,⁷³ և որ «*խոսքի և վնասի միջև պատճառահետևանքային կապի ուղղակիությունը, ինչպես նաև վնասի ծանրությունն ու անհապաղությունը հիմնական նկատառումներ են՝ գնահատելու, թե արդյոք սահմանափակումը անհրաժեշտ է*», և որ «*սա չի նշանակում, որ քաղաքական խոսքի համատեքստում ապատեղեկատվությունը երբեք չի կարող սահմանափակվել, բայց նման որևէ սահմանափակում պահանջում է օրինականության, իրավաչափության, անհրաժեշտության և համաչափության բարձր շեմ*»:⁷⁴ Այնուամենայնիվ, ՄԱԿ-ի հատուկ զեկույցողը նաև նշեց, որ կեղծ տեղեկատվության արգելքն ինքնին իրավաչափ նպատակ չէ մարդու իրավունքների միջազգային իրավական շրջանակի համաձայն:⁷⁵
57. 2025 թվականի մեկ այլ զեկույցում ՄԱԿ-ի հատուկ զեկույցողն անդրադառնում է ապատեղեկատվության առնչությամբ կուսակցությունների ունեցած դերին,

⁷¹ Տե՛ս, օրինակ, ԵՖ, Եվրոպայի խորհրդի 2017թ. զեկույց. Տեղեկատվական անկարգություն. Հետազոտության և քաղաքականության մշակման համար միջուլտրային շրջանակին ընդառաջ, պարբերություն 20

⁷² Միավորված ազգերի կազմակերպություն, Կարծիքի և արտահայտման ազատության իրավունքի խթանման և պաշտպանության հարցերով հատուկ զեկույցող, Ջեկույց, Արտահայտման ազատությանը Գազայում հակամարտությունից բխող զլոբալ սպառնալիքները, 2024թ., A/79/319

⁷³ Միավորված ազգերի կազմակերպություն, Կարծիքի և արտահայտման ազատության իրավունքի խթանման և պաշտպանության հարցերով հատուկ զեկույցող, Ջեկույց, Ապատեղեկատվություն և կարծիքի և արտահայտման ազատություն, 2021թ., A/HRC/47/25, պարբերություն 40

⁷⁴ Միավորված ազգերի կազմակերպություն, Կարծիքի և արտահայտման ազատության իրավունքի խթանման և պաշտպանության հարցերով հատուկ զեկույցող, Ջեկույց, Ապատեղեկատվություն և կարծիքի և արտահայտման ազատություն, 2021թ., A/HRC/47/25, պարբերություն 76

⁷⁵ Միավորված ազգերի կազմակերպություն, Կարծիքի և արտահայտման ազատության իրավունքի խթանման և պաշտպանության հարցերով հատուկ զեկույցող, Ջեկույց, Ապատեղեկատվություն և կարծիքի և արտահայտման ազատություն, 2021թ., A/HRC/47/25, պարբերություն 40

և այն դեպքերին, երբ կուսակցության պաշտոնյաները, թեկնածուները, անդամները կամ աշխատողները զբաղվում են ընտրություններին վերաբերող ապատեղեկատվությամբ, լրատվամիջոցների վրա հարձակումներով՝ ձգտելով վարկաբեկել և խաթարել տեղեկատվության ազատ հոսքը և արտահայտման ազատության իրացումը: Օրինակ, Ջեկուցողը կոչ արեց առ այն, որ «Կուսակցությունները պետք է ընդունեն և կիրառեն վարքագծի կանոններ, որոնք սահմանում են իրենց թեկնածուների, պաշտոնյաների, անդամների և աշխատողների համար վարքագծի և հաշվետվողականության նվազագույն չափանիշները՝ խրախուսելով արտահայտման ազատության նկատմամբ հարգանքը և արգելելով առցանց կամ անցանց բռնությունը կամ կանանց, խոցելի կամ մարգինալացված խմբերի, լրագրողների, մարդու իրավունքների պաշտպանների, ընտրված պաշտոնյաների և ընտրությունների դիտորդների նկատմամբ բռնության, ստեղծության և խտրականության հրահրումը: Թեկնածուներն ու կուսակցությունները պետք է թափանցիկ լինեն սոցիալական ցանցերում ինֆլուենսերների (հասարակական ազդեցություն ունեցող անձանց) հետ իրենց գործարքային հարաբերությունների հարցում և զերծ մնան ինֆլուենսերներին կամ այլ պրոքսիներին՝ որպես վնասակար խոսքի և ապատեղեկատվության «սուրոգատներ» օգտագործելուց կամ նման բովանդակությունը վերահրապարակելուց և առաջ մղելուց»:⁷⁶

58. Հետևաբար, կարելի է դիտարկել այնպիսի քաղաքականության որդեգրումը, որը նախատեսում է կարգապահական միջոցների կիրառում այն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ, ովքեր ի պաշտոնե գործելիս կամ պաշտոնեական դիրքում ընկալվելով, անում, հովանավորում, խրախուսում կամ տարածում են այնպիսի հայտարարություններ, որոնց կեղծ լինելու մասին իրենք տեղյակ են կամ պետք է ողջամտորեն տեղյակ լինեին, և որոնք ապահովում են պետական մարմինների կողմից ճշգրիտ և հուսալի, այդ թվում՝ իրենց գործունեության և հանրային շահին վերաբերող հարցերի մասին տեղեկատվություն տարածելուն ուղղված բոլոր ջանքերի գործադրումը:

5. ԱՁԴԱՐԱՐՆԵՐ

59. Քանի որ արտահայտման ազատությունը կարող է նաև հատվել «թաքնված չարաշահումների» բացահայտման հետ, երբ անհատները փորձում են բացահայտել վատ կառավարումը, իրավական դրույթների խախտումները և պետական կառավարման ոլորտում այլ չարաշահումները, փոխկապակցվածություն կա այս իրավունքի և ազդարարաների պաշտպանության միջոցների միջև:⁷⁷ Միջազգային չափորոշիչները ճանաչել են ազդարարների պաշտպանության մասին օրենքների կարևորությունը

⁷⁶ Միավորված ազգերի կազմակերպություն, Կարծիքի և արտահայտման ազատության իրավունքի խթանման և պաշտպանության հարցերով հատուկ զեկուցող, Արտահայտման ազատությունը և ընտրությունները թվանշային դարաշրջանում, 2025թ., A/HRC/59/50, պարբերություններ 106-107

⁷⁷ ՄԱԿ Գլխավոր ասամբլեա, Կարծիքի և արտահայտման ազատության իրավունքի խթանման և պաշտպանության հարցերով հատուկ զեկուցողի զեկույց, 2015թ., A/70/361, պարբերություն 26

որպես արդյունավետ հակակոռուպցիոն շրջանակի մի տարր: Օրինակ, ազդարարների պաշտպանության պահանջները ներառվել են ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» կոնվենցիայում, Միջազգային գործարար գործարքներում օտարերկրյա հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կաշառակերության դեմ հետագա պայքարի հարցերով խորհրդի 2021 թվականի հանձնարարականում⁷⁸ («Կաշառակերության դեմ հանձնարարական») և Եվրոպայի խորհրդի՝ Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի և քրեական իրավունքի կոնվենցիաներում (1999թ.):⁷⁹

60. Ինչպես նշել է Կարծիքի և արտահայտման ազատության իրավունքի խթանման և պաշտպանության հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը, պետական պրակտիկան այս ոլորտում ակնհայտորեն անհավասար է. անհատները *«ենթարկվում են ոստիկանությունների, ահաբեկումների, գործով քննությունների, քրեական հետապնդման և հաշվեհարդարի այլ տեսակների: Պետություններն ու կազմակերպությունները պաշտպանությունն իրականացնում են միայն մասամբ կամ պատասխանատվության չեն ենթարկում նրանց, ովքեր հաշվեհարդար են տեսնում ազդարարների հետ»*:⁸⁰ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը նաև նշել է, որ *«օրենքները պետք է նպաստեն, հանրային շահերից ելնելով, տեղեկատվության բացահայտմանը», բնավ ոչ այն պատճառով, որ պետական գործիչներն «ունեն լիազորությունների առավել մեծ շրջանակ՝ վախեցնելու, քննություն անցկացնելու, քրեական հետապնդում իրականացնելու առումով»*, կարճ ասած, նրանց համար ազդեցության շրջանակը լայն է, մինչդեռ ազդարարները և այլք պաշտպանության ընդամենն ավելի փոքր հնարավորություն ունեն:⁸¹
61. Ազդարարումն, ընդհանուր առմամբ, հարկ է տարբերակել պետական պաշտոնյաների և քաղաքացիական ծառայողների կողմից կատարված խախտումների մասին հաղորդումներից:⁸² Ազդարարների դեպքում ենթադրվում է մասնագիտական աշխատանքային հարաբերությունների առկայությունը, որոնք հատվում են հավատարմության, զսպվածության և այն հայեցողության հետ, որ աշխատակիցները պարտավոր են ունենալ իրենց գործատուների նկատմամբ: Ի տարբերություն դրա, խախտումների մասին հաղորդելը չի պահանջում նույն մասնագիտական հարաբերությունների առկայությունը, բայց, ընդհանուր առմամբ, պաշտպանություն է տրամադրվում միայն պաշտոնյաների դեմ հաղորդումների դեպքում:⁸³

⁷⁸ ՏՀԶԿ իրավական փաստաթղթեր

⁷⁹ Քրեական իրավունք, Կոռուպցիայի դեմ կոնվենցիան հասանելի է այստեղ՝ CETS 173 – Քրեական իրավունք, Կոռուպցիայի դեմ կոնվենցիա, Քաղաքացիական իրավունք, Կոռուպցիայի դեմ կոնվենցիան հասանելի է այստեղ՝ CETS 174 – Քաղաքացիական իրավունք, Կոռուպցիայի դեմ կոնվենցիա

⁸⁰ ՄԱԿ Գլխավոր ասամբլեա, Կարծիքի և արտահայտման ազատության իրավունքի խթանման և պաշտպանության հարցերով հատուկ զեկուցողի զեկույց, 2015թ., A/70/361, պարբերություն 26

⁸¹ ՄԱԿ Գլխավոր ասամբլեա, Կարծիքի և արտահայտման ազատության իրավունքի խթանման և պաշտպանության հարցերով հատուկ զեկուցողի զեկույց, 2015թ., A/70/361, պարբերություն 58

⁸² ՄԻԵԴ, *Բրչկոյի իսլամական համայնքի մեջիսն ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի (Medžlis Islamske Zajednice Brčko and Others v. Bosnia and Herzegovina [GC])*, դիմում թիվ 17224/11, 27 հունիսի 2017թ., պարբերություն 80-84

⁸³ ՄԻԵԴ, *Գուջան ընդդեմ Մոլդովայի (Guja v. Moldova [GC])*, դիմում թիվ 14277/04, 12 փետրվարի 2008թ., պարբերություն 70

Արտահայտման ազատության իրավունքին պետության կողմից հնարավոր միջամտության համապատասխան հիմնավորումները տարբեր են այս երկու կատեգորիաների համար. առաջինը, ընդհանուր առմամբ, հղում է կատարում խորհրդապահական նյութերի բացահայտման կանխարգելմանը, իսկ երկրորդը՝ ուրիշների իրավունքների պաշտպանությանը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ճանաչել է սա *Գուջան ընդդեմ Մոլդովայի* գործում:⁸⁴ Հետևաբար, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի համաձայն հատուկ պաշտպանություն է տրամադրում նրանց, ովքեր ահազանգում են իրենց գործատուի ենթադրյալ անօրինական արարքի մասին:⁸⁵

62. *Գուջան ընդդեմ Մոլդովայի* գործում Դատարանը հստակ նշեց, որ զրպարտչական դիտողությունների թիրախի կարգավիճակը կներառվի վերլուծությունում, ընդ որում հանրային անձանց վերաբերյալ ընդունելի քննադատության տիրույթն ավելի լայն է, քան մասնավոր անձանց դեպքում: Այդ վերլուծությանն աջակցելու համար Մեծ պալատը նույնականացրեց վեց չափանիշ, որոնք վերաբերում են ազդարարների արտահայտման ազատության համաչափության թեստին:⁸⁶

1. *Այդ բացահայտումը նախնառաջ կատարվել է անձի վերադասի մոտ կամ այլ իրավասու կառույցում կամ մարմնում, ինչը ցույց է տալիս չարաշահումը վերացնելու համար այլ միջոցների, օրինակ՝ պաշտոնական ընթացակարգերի վերաբերելիությունը:*⁸⁷
2. *Հատուկ ուշադրություն պետք է դարձնել բացահայտված տեղեկատվության հետ կապված հանրային շահին:*⁸⁸
3. *Բացահայտված տեղեկատվության իսկությունը:*⁸⁹

⁸⁴ ՄԻԵԿ, *Գուջան ընդդեմ Մոլդովայի (Gujá v. Moldova [GC])*, դիմում թիվ 14277/04, 12 փետրվարի 2008թ., պարբերություն 72, ՄԻԵԿ, *Մառչենկոն ընդդեմ Ուկրաինայի (Marchenko v. Ukraine)*, դիմում թիվ 4063/04, 2009թ., պարբերություն 46, ՄԻԵԿ, *Հայնիշն ընդդեմ Գերմանիայի (Heinisch v. Germany)*, դիմում թիվ 28274/08, 21 հուլիսի 2011թ., պարբերություն 63, ՄԻԵԿ, *Գորյայնովան ընդդեմ Ուկրաինայի (Goryaynova v. Ukraine)* դիմում թիվ 41752/09, 8 հոկտեմբերի 2020թ., պարբերություն 50

⁸⁵ ՄԻԵԿ, *Լանգներն ընդդեմ Գերմանիայի (Langner v. Germany)*, դիմում թիվ 14464/11, 17 սեպտեմբերի 2015թ., պարբերություն 47, ՄԻԵԿ, *Հայնիշն ընդդեմ Գերմանիայի (Heinisch v. Germany)*, դիմում թիվ 28274/08, 21 հուլիսի 2011թ., պարբերություն 43

⁸⁶ ՄԻԵԿ, *Գուջան ընդդեմ Մոլդովայի (Gujá v. Moldova [GC])*, դիմում թիվ 14277/04, 12 փետրվարի 2008թ., պարբերություններ 74-78

⁸⁷ *Հելդլինն ընդդեմ Միացյալ Թագավորության, (Haseldine v. the United Kingdom)*, Հանձնաժողովի որոշում, դիմում թիվ 18957/91; ՄԻԵԿ, *Բուքուրը և Թոման ընդդեմ Ռումինիայի (Bucur and Toma v. Romania)*, դիմում թիվ 40238/02, 8 հունվարի 2013թ., ՄԻԵԿ, *Մաթուզն ընդդեմ Հունգարիայի (Matúz v. Hungary)* դիմում թիվ 73571/10, 21 հոկտեմբերի 2014թ., և *Սոբան ընդդեմ Պորտուգալիայի (Soares v. Portugal)*, դիմում թիվ 79972/12, 21 հունիս 2016թ., պարբերություն 48

⁸⁸ ՄԻԵԿ, *Գուջան ընդդեմ Մոլդովայի (Gujá v. Moldova [GC])*, դիմում թիվ 14277/04, 12 փետրվարի 2008թ., պարբերություն 74; մտահոգություններ՝ կապված հանրային ֆինանսական միջոցների յուրացման հետ (*Մառչենկոն ընդդեմ Ուկրաինայի Marchenko v. Ukraine*, դիմում թիվ 4063/04, 19 փետրվարի 2009թ., պարբերություն 10) և բարձրաստիճան պաշտոնյաների՝ պետության ժողովրդավարական հիմքերը վնասող վարքը կամ Կառավարության՝ ոստիկանության կողմից բիրտ ուժի կիրառման նկատմամբ վերաբերմունքը (*Բուքուրը և Թոման ընդդեմ (Ռումինիայի Bucur and Toma v. Romania)*, դիմում թիվ 40238/02, 8 հունվարի 2013թ., para 103) պաշտպանության են արժանացել:

⁸⁹ Այստեղ անհրաժեշտ է հնարավորինս ուշադիր ստուգել բացահայտված տեղեկատվության ճշգրտությունն ու հուսալիությունը: (*Բլադետ Թրոմսոն և Ստենսասան ընդդեմ Նորվեգիայի (Bladet Tromsø and Stensaa v. Norway [GC])*, դիմում թիվ 21980/03, 20 մայիսի 1999թ.):

4. Անհրաժեշտությունը՝ կշռելու հնարավոր վնասը, որ կարող է կրել պետական մարմինը, տեղեկատվությունը բացահայտելու շահի հետ համեմատությամբ:⁹⁰
 5. Հաղորդումը տվող աշխատակցի շարժառիթը պետք է լինի այնպիսին, որ հնարավոր լինի համարել, որ այս անձը գործել է բերախղճորեն, քանի որ անհատն ունեցել է ողջամիտ հիմքեր կարծելու, որ տեղեկատվությունը ճշմարիտ է և չի հետապնդել որևէ անօրինական կամ ոչ էթիկական նպատակ:⁹¹ Անձնական դժգոհությունը կամ անձնական կոնֆլիկտը կամ առավելության հասնելու ակնկալիքը կուռ պաշտպանության չեն արժանանա:
 6. Անհատի նկատմամբ կիրառված պատժի և դրա հետևանքների ուշադիր վերլուծություն:⁹²
63. Գուջայի գործով ազդարարման համատեքստից դուրս, խոսքի համատեքստը կարևոր է համարվում փաստերին վերաբերող հայտարարությունների և գնահատողական դատողությունների գնահատման/տարբերակման համար: Աշխույժ քաղաքական բանավեճերի դեպքում համարվում է, որ ընտրված պաշտոնյաներն ու լրագրողները մեծ ազատություն ունեն՝ քննադատելու թե՛ տեղական, թե՛ ազգային հանրային մարմիններին, նույնիսկ եթե փաստական հիմքերի վերաբերյալ հստակությունն ավելի քիչ է (տե՛ս 3.2.3 ենթաբաժինը վերը):⁹³

6. ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

64. Վարքագծի գործող կանոնագրքերի տեսանկյունից որոշակի խոսքի կամ արտահայտությունների համար վերլուծության անհրաժեշտությունը գնահատելիս կարևոր է որոշել, թե ինչ դիրքից է արվել տվյալ հայտարարությունը: Հաճախ պաշտոնեական կամ մասնագիտական դիրքում արված հայտարարությունները կարելի է բերել վարքագծի կանոնագրքերի դաշտ, մինչդեռ մասնավոր դիրքից արված հայտարարությունները, հավանաբար, այս շրջանակից դուրս կընկնեն: Մինևույն ժամանակ, համապատասխան հանգամանքները կարող են հանգեցնել այն եզրակացության, որ որոշակի մասնավոր վարքագիծ դեռևս կարող է դիտարկվել հանրային պաշտոն զբաղեցնող անձի վարքագիծը կարգավորող վարքագծի կանոնագրքի շրջանակներում: Օրինակ, սա կախված կլինի հրապարակայնորեն տարածվող արտահայտության կամ տեղեկատվության

⁹⁰ Այստեղ սովորաբար մեջբերվում է ազգային անվտանգությունը, սակայն երբ խախտումը վերաբերում է նման ծառայություններին կամ երբ զինված ուժերի գործելակերպերում հակասություն է լինում, հանրային շահը գերակշռում է հանրային վստահությունը պահպանելու անհրաժեշտությանը, եթե թեստի նախորդ քայլերը կատարված են:

⁹¹ ՄԻԵԴ, *Գուջան ընդդեմ Մոլդովայի (Guja v. Moldova [GC])*, դիմում թիվ 14277/04, 12 փետրվարի 2008թ., պարբերություն 77, հիմնվելով ՄԻԵԴ, *Հայնիշն ընդդեմ Գերմանիայի (Heinisch v. Germany)*, դիմում թիվ 28274/08, 21 հուլիսի 2011թ. և Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 1729 (2010) բանաձևի վրա:

⁹² ՄԻԵԴ, *Գուջան ընդդեմ Մոլդովայի (Guja v. Moldova [GC])*, դիմում թիվ 14277/04, 12 փետրվարի 2008թ., պարբերություն 78, *Ֆուենտես Բոբոն ընդդեմ Իսպանիայի (Fuentes Bobo v. Spain)*, դիմում թիվ 39293/98, 29 փետրվարի 2000թ., պարբերություն 49, ՄԻԵԴ, *Գոլիքն ընդդեմ Լիխտենշտեյնի (Gawlik v. Liechtenstein)*, դիմում թիվ 23922/19, 16 փետրվարի 2021թ., պարբերություն 85, ՄԻԵԴ, *Հայնիշն ընդդեմ Գերմանիայի (Heinisch v. Germany)*, դիմում թիվ 28274/08, 21 հուլիսի 2011թ., պարբերություն 91, ՄԻԵԴ, *Մառչենկոն ընդդեմ Ուկրաինայի (Marchenko v. Ukraine)*, դիմում թիվ 4063/04, 2009թ., պարբերություններ 52-53

⁹³ ՄԻԵԴ, *Լոմբարդոն և այլք ընդդեմ Մալթայի (Lombardo and Others v. Malta)*, պարբերություն 60, ՄԻԵԴ, *Դյուլդին և Կիսլովն ընդդեմ Ռուսաստանի (Dyuldin and Kislov v. Russia)*, պարբերություն 49

բնույթից, ինչպես նաև այն ընկալումից, թե արդյոք խնդրո առարկա արտահայտությունը արվել է պաշտոնական դիրքից և արդյոք այն հիմնված է եղել ի պաշտոնե վերապահված արտոնությունների շնորհիվ հասանելի տեղեկատվության վրա: Կարևոր է նաև հաշվի առնել քաղաքացիական ծառայողի կոչումն ու պաշտոնը և այն, թե արդյոք նման արտահայտությունները կարող են ստվերել պետական կառավարման բարեվարքությունը: Հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից մասնավոր դիրքից արված զրպարտչական կամ վիրավորական հրապարակային արտահայտության դեպքում դա կարող է հանգեցնել այդ արտահայտության գնահատմանը՝ ըստ վարքագծի կանոնագրքի:

65. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագիծը կարգավորող վարքագծի կանոնների հնարավոր խախտումները գնահատելու համար պատասխանատու մարմինը պետք է հաստատված կամ ընդունված փաստերի հիման վրա որոշի, թե արդյոք պատասխանողը խախտել է համապատասխան վարքագծի կանոնագրքի որևէ դրույթ, թե ոչ: Եթե ապացուցման այս չափանիշի հիման վրա մարմինը նման խախտում չի գտնում, այն հրապարակում է իր որոշումը, բացատրում իր պատճառաբանությունը և փակում լսումները: Մակայն, եթե մարմինը եզրակացնի, որ ամենայն հավանականությամբ խախտումը տեղի է ունեցել, ապա վերջնական որոշում կայացնելուց առաջ պետք է անցնի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի հետևանքների քննարկմանը:
66. Հաջորդ քայլով, այս մարմինը պետք է քննի, թե արդյոք խախտման վերաբերյալ իր նախնական եզրակացությունը կսահմանափակի պաշտոնյայի 10-րդ հոդվածով նախատեսված արտահայտման ազատության իրավունքը: Այս ընթացքում մարմինը պետք է, ի թիվս այլոց, հաշվի առնի, թե արդյոք վիճարկվող հայտարարությունները կամ գործողությունները տեղի են ունեցել քաղաքական համատեքստում, օրինակ՝ հանրային շահին վերաբերող հարցերի շուրջ քննարկման ժամանակ: Եթե այո, ապա մարմինը պետք է ընդունի, որ նման արտահայտությունները, հավանաբար, ավելի բարձր մակարդակի պաշտպանություն կապահովեն, նույնիսկ տեղական մակարդակում: Ավելի բարձր մակարդակի պաշտպանության կիրառման դեպքում սահմանափակումների հիմքում պետք է հստակ և բավարար հիմնավորումներ լինեն: Մարմինը պետք է գնահատի, թե արդյոք միջամտության պատճառները, օրինակ՝ ուրիշների իրավունքների և հեղինակության պաշտպանությունը կամ հասարակական կարգի պահպանումը կամ ազգային անվտանգությունը, իրավաչափ են, և արդյոք այդ միջամտությունն անհրաժեշտ է և համաչափ: Համաչափությունը գնահատելիս կարևոր է հաշվի առնել, թե ինչը կարող է լինել ցանկալի նպատակին հասնելու նվազագույն սահմանափակող միջոցը: Մարմինը պետք է նաև կշռի, թե արդյոք սահմանափակումը կարող է անհարկիորեն սահմանափակել հանրային պաշտոն զբաղեցնող անձի՝ քաղաքական քննարկումներին նպաստելու կամ թափանցիկ կերպով վերահսկողության գործառույթներ կատարելու կարողությունը: Գաղտնիության ենթադրյալ խախտումների դեպքում

մարմինը պետք է գնահատի, թե արդյոք նույն նպատակին կարելի էր հասնել առանց այս գաղտնի տեղեկատվության հրապարակային բացահայտման:

67. Արարքի ծանրությունը նույնպես կարևոր է գնահատել. որքան նվազ վիրավորական կամ ցնցող է վարքագիծը, այնքան դժվար է արդարացնել միջամտությունը, մասնավորապես, երբ ավելի բարձր մակարդակի պաշտպանություն է կիրառվում: Ընդհանուր առմամբ, իր գնահատման ընթացքում մարմինը պետք է գնահատի, թե արդյոք իր որոշումից բխող արտահայտման ազատության որևէ սահմանափակում կարող է արդարացվել ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն: Սա ենթադրում է եռակողմ թեստի տրամաբանությամբ առաջնորդվելը և գնահատելը, թե արդյոք տվյալ սահմանափակումը համապատասխանում է հետևյալ երեք պահանջներին. արդյոք այն՝ ա) նախատեսված է օրենքով, բ) հետապնդում է իրավաչափ նպատակ և գ) համաչափ է և անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում:
68. Ընդհանուր առմամբ, մարմինը, որը պետք է գործի անկախ, անաչառ, օբյեկտիվ և արագ, պետք է վարույթն իրականացնի այն ենթադրությամբ, որ վարքագծի կիրառելի կանոնագիրքը նպատակ ունի պահպանել հանրային կյանքի համար ընդունելի չափորոշիչները, կանխել այնպիսի վարքագիծը, որը հանգեցնում է կաշկանդող ազդեցության և խեղդում է հանրային բանավեճը, և պաշտպանել ուրիշներին վիրավորական, հարձակողական կամ զրպարտչական դիտողություններից: Ընդունելով, որ յուրաքանչյուր դեպք պետք է լուծվի դրա կոնկրետ հանգամանքների հիման վրա, կարևոր է, որ կիրառելի կանոնների ընթացակարգերն ու մեկնաբանությունները չհանգեցնեն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց աշխատանքի անհարկի խաթարմանը, և պահպանեն պաշտոնատար անձանց և հանրության միջև փոխադարձ վստահությունը, պաշտպանեն գաղտնի տեղեկատվությունը, ինչպես նաև այն կազմակերպությունների հեղինակությունը, որոնցում աշխատում են հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և կանխեն այնպիսի գործողությունները, որոնք կարող են խաթարել լավ կառավարումը կամ ժողովրդավարության նկատմամբ հանրային վստահությունը:

7. ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԵՄՏԱՍԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

69. ԵԱՀԿ տարածաշրջանում մասնակից պետությունները տարբեր մոտեցումներ ունեն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագիծը կարգավորելու հարցում:
70. Բուլղարիայի՝ 2020 թվականին ընդունված «Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնագիրքը» ընդլայնում է պետական կառավարման ոլորտում քաղաքացիական ծառայողների վարքագծի սկզբունքների ցանկը և իրավական սահմանում է տալիս յուրաքանչյուր սկզբունքի՝ դրանց

մեկնաբանությունն ու կիրառումը դյուրացնելու համար:⁹⁴ Կանոնագիրքը սահմանում է, որ ի պաշտոնե իրենց պարտականությունները կատարելիս և հասարակական կյանքում, այդ թվում՝ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման ժամանակ, պետական կառավարման ոլորտի աշխատակիցները պետք է հետևեն այնպիսի վարքագծի, որը չի խաթարի քաղաքացիական ծառայության հեղինակությունը:

71. Կանադան ընդունել է «Հանրային հատվածի արժեքների և էթիկայի կանոնագիրքը»,⁹⁵ որը մի շարք արժեքներ է պարունակում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար: Այս կանոնագիրքը ներկայացնում է ընդհանուր դրույթների համադրություն, քանի որ այն սահմանում է կանոնագրքի նպատակները և արժեքները, որոնք պետք է պահպանվեն բավականին ընդհանրացված ձևով, ինչպես նաև տրամադրում է համառոտ և ընդհանրացված տեղեկատվություն հանրային ծառայողներից սպասվող վարքագծի մասին: Այնուամենայնիվ, այս կանոնագիրքը պարտադիր գործիք է, քանի որ այն սահմանում է, որ «այս արժեքների կամ վարքագծերի խախտումը կարող է հանգեցնել կարգապահական միջոցների կիրառման, ընդհուպ մինչև և ներառյալ աշխատանքի դադարեցումը»:⁹⁶ Կանոնագրքի հավելվածը ավելի մանրամասն բացատրություններ է տրամադրում հանրային ծառայողների պարտականությունների վերաբերյալ, սակայն դրանք նույնպես ընդհանուր բնույթի են: Հանրային ծառայողների կոնկրետ պարտավորությունների մասին ավելի մանրամասն տեղեկատվություն տրամադրվում է ուղեկցող ուղեցույցների միջոցով, ինչպիսիք են՝ «Հանրային ծառայողների համար սոցիալական ցանցերի անձնական օգտագործման ուղեցույցը»:⁹⁷ Այնտեղ նշվում է, որ «պրոֆեսիոնալ, անկուսակցական և անաչառ դաշնային հանրային ծառայությունը մեր ժողովրդավարության անբաժանելի մասն է»:⁹⁸ Հետևաբար, թեև հանրային ծառայողներն ունեն արտահայտման ազատության իրավունք, կարևոր է նաև, որ նրանք իրենց պահեն անկուսակցականի նման, որպեսզի չշեղվեն հավատարմության պարտականությունից և չխաթարեն հանրային հատվածի հեղինակությունը: Նշվում է, որ հավատարմության պարտականությունը «[...] արդարացիորեն սահմանափակում է հանրային ծառայողների արտահայտման ազատությունը,

⁹⁴ Բուլղարիան ընդունել է Պետական կառավարման ոլորտում քաղաքացիական ծառայողների վարքագծի նոր կանոնագիրքը, Lex.bg – Օրենքներ, կարգավորումներ, Սահմանադրություն, օրենսգրքեր, պետական տեղեկագիր, ենթաօրենսդրական ակտեր (հասանելի է բուլղարերենով):

⁹⁵ Կանադայի հանրային հատվածի արժեքների և էթիկայի կանոնագիրք, 2011, <https://www.tbs-sct.canada.ca/pol-cont/25049-eng.pdf>.

⁹⁶ Կանադայի հանրային հատվածի արժեքների և էթիկայի կանոնագիրք, 2011, <https://www.tbs-sct.canada.ca/pol-cont/25049-eng.pdf>.

⁹⁷ Հանրային ծառայողների համար սոցիալական ցանցերի անձնական օգտագործման ուղեցույց, Կանադայի գանձապետարանի խորհրդի քարտուղարություն, <https://www.canada.ca/en/treasury-board-secretariat/topics/values-ethics/guidance-for-public-servants-personal-use-of-social-media.html>

⁹⁸ Հանրային ծառայողների համար սոցիալական ցանցերի անձնական օգտագործման ուղեցույց, Կանադայի գանձապետարանի խորհրդի քարտուղարություն, ապրիլի 6, 2025թ., <https://www.canada.ca/en/treasury-board-secretariat/topics/values-ethics/guidance-for-public-servants-personal-use-of-social-media.html>

մասնավորապես, երբ նրանց հրապարակային հայտարարությունները կարող են վնասել Կանադայի կառավարության հեղինակությանը»:⁹⁹

72. Այնուամենայնիվ, հանրային ծառայողների արտահայտման ազատության հստակ սահմանափակում դնելուց բացի, այս ուղեցույցները նաև նախատեսում են, որ հավատարմության այս պարտականությունը պետք է հավասարակշռվի պետական ծառայողների արտահայտվելու ազատության հետ: Ուղեցույցը նշում է երեք իրավիճակ, երբ այս շահերի հավասարակշռումը, հավանաբար, կհանգեցնի հավատարմության պարտականությունից ազատման. այն դեպքերում, երբ կառավարությունը ներգրավված է անօրինական գործողություններում, կառավարության քաղաքականությունը վտանգում է կյանքը, առողջությունը կամ անվտանգությունը, և հանրային ծառայողի քննադատությունը որևէ ազդեցություն չունի հանրային ծառայողի պարտականություններն արդյունավետ կատարելու նրա ունակության կամ այդ ունակության հանրային ընկալման վրա: Այն նաև նշում է, որ սոցիալական ցանցերը չպետք է օգտագործվեն հանրային ծառայությունում չարաշահումների մասին մեղադրանքները բացահայտելու համար, այլ որ դա պետք է արվի այս նպատակով մշակված կառուցակարգերի միջոցով:
73. Խորվաթիայի՝ «Հանրային ծառայողների և աշխատողների էթիկայի կանոնագիրքը» սահմանում է, որ պետական մարմինը ներկայացնելիս պաշտոնական հաղորդակցության միջոցներից և սոցիալական ցանցերում հաղորդակցության բոլոր ձևերից օգտվելու ընթացքում, քաղաքացիական ծառայողը պարտավոր է բարձր պահել իր անձնական հեղինակությունը և պետական մարմնի աշխատանքի և հեղինակության նկատմամբ հանրային վստահությունը: Սոցիալական ցանցերի մասնավոր օգտագործման վերաբերյալ կանոնագիրքը սահմանում է, որ քաղաքացիական ծառայողը պետք է հարգի անձնական տվյալների պաշտպանության մասին օրենքները և գործի այնպես, որ իր անձնական տեսակետներն ու դրանց վերաբերող հայտարարությունները չկապվեն պաշտոնական պարտականությունների կատարման հետ:¹⁰⁰
74. Ֆրանսիայում քաղաքացիական ծառայողները համարվում են հանրային ծառայության ոլորտի աշխատակիցներ և պետության ներկայացուցիչներ, ինչը ենթադրում է հատուկ իրավունքներ և պարտականություններ՝ նրանց աշխատանքային պարտականությունների շրջանակներում և դրանից դուրս: Կարգապահական տույժերը կարող են ներառել նախազգուշացումները, բացառումները, կարիերայի առաջխաղացման սահմանափակումները և հարկադիր թոշակի անցնելը: Ինչպես և Եվրոպայի խորհրդի և ԵՄ այլ անդամ պետությունների դեպքում, Ֆրանսիայի քաղաքացիական ծառայողների

⁹⁹ Հանրային ծառայողների համար սոցիալական ցանցերի անձնական օգտագործման ուղեցույց, Կանադայի գանձապետարանի խորհրդի քարտուղարություն, ապրիլի 6, 2025թ., <https://www.canada.ca/en/treasury-board-secretariat/topics/values-ethics/guidance-for-public-servants-personal-use-of-social-media.html>

¹⁰⁰ Էթիկայի կանոնագիրք քաղաքացիական ծառայողների և աշխատակիցների համար (Narodne novine no. 8/2025), հասանելի է այստեղ՝ [Էթիկայի կանոնագիրք քաղաքացիական ծառայողների և աշխատակիցների համար \(Narodne novine no. 8/2025\) | Խորվաթիայի խորհրդարան](#)

համար երաշխավորված է կարծիքի ազատությունը,¹⁰¹ սակայն դա պետք է տարբերակել այդ կարծիքների արտահայտման ազատությունից:

75. Ֆրանսիայի քաղաքացիական ծառայության ընդհանուր օրենսգիրքը նշում է աշխատավայրում արտահայտվելու ազատության վերաբերյալ կիրառելի հետևյալ ոլորտները, որոնք ներառում են չեզոքության, մասնագիտական հայեցողության, մասնագիտական գաղտնիքի և ազդարարների հետ կապված պարտավորությունները: Այս պարտավորությունների խախտումները կարող են քննվել կարգապահական վարույթում և հանգեցնել համապատասխան տույժերի կիրառման, սակայն կան մի շարք ընթացակարգային պաշտպանություններ, այդ թվում՝ անձնական գործերին հասանելիություն ստանալու և իրենց ընտրած փաստաբանի աջակցությունից օգտվելու իրավունքը: Չեզոքության պարտավորությունը,¹⁰² որը կապված է հանրային ծառայության առջև բոլորի հավասարության ֆրանսիական սկզբունքի հետ, արգելում է Ֆրանսիայի հանրային ծառայության աշխատակիցներին իրենց աշխատանքի ընթացքում որևէ կերպ անձնական կարծիքներ արտահայտելը (բառերի, հագուստի կամ վարքագծի միջոցով):¹⁰³
76. Մասնագիտական գաղտնիքը պահելու պարտավորությունը պահանջում է, որ պետական ծառայողները պահպանեն մասնագիտական գաղտնիքը՝ օրենսգրքի 121-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանվածի համաձայն:¹⁰⁴ Այն վերաբերում է բոլոր փաստերին, ողջ տեղեկատվությանը և բոլոր փաստաթղթերին, որոնց մասին քաղաքացիական ծառայողն իրազեկվում է իր աշխատանքի ողջ ընթացքում, ինչն առաջնայնորեն սահմանափակում է այդ տեղեկատվության հրապարակային բացահայտման հնարավորությունը, չնայած այն բանին, որ ազդարարների համար պաշտպանություն է նախատեսված:¹⁰⁵ Օրենսգրքի այս տարրը գործում է քաղաքացիական ծառայողների՝ մասնագիտական գաղտնիքի պահպանման պարտավորության հետ համատեղ, երբ նրանց տիրապետած տեղեկատվությունը մակնշված է որպես այդպիսին:¹⁰⁶ Ֆրանսիայում քաղաքացիական ծառայողը կարող է խախտել մասնագիտական հայեցողության և գաղտնիության կանոնները, երբ բացահայտում է հանցագործություններ, օրենքի լուրջ խախտումներ կամ հանրային շահերին սպառնացող վտանգներ (օրենսգրքի L. 135-րդ հոդվածի 4-րդ մասով և Թափանցիկության, կոռուպցիայի դեմ պայքարի և տնտեսական կյանքի արդիականացման մասին թիվ 2016-1691 օրենքով ազդարարների համար սահմանված պաշտպանություն):¹⁰⁷ Աշխատավայրից դուրս կիրառվում է

¹⁰¹ Քաղաքացիական ծառայության ընդհանուր օրենսգիրք, ուժի մեջ է մտել 1 մարտի 2022թ., L. 111-1, L. 113-1, L. 114-1 հոդվածներ, Մարդու և քաղաքացիական իրավունքների հռչակագիր (1789թ.), 10-րդ հոդված

¹⁰² Քաղաքացիական ծառայության ընդհանուր օրենսգիրք, ուժի մեջ է մտել 1 մարտի 2022թ., L. 121-2 հոդված

¹⁰³ Ֆրանսիա, Գործ թիվ 244428 M. Odent, Պետական խորհուրդ, 15 հոկտեմբերի 2003թ.

¹⁰⁴ Քաղաքացիական ծառայության ընդհանուր օրենսգիրք, ուժի մեջ է մտել 1 մարտի 2022թ., L. 121-7 հոդված

¹⁰⁵ Ֆրանսիա, Գործ թիվ 393320, Պետական խորհուրդ, 20 մարտի 2017թ.

¹⁰⁶ Քաղաքացիական ծառայության ընդհանուր օրենսգիրք, ուժի մեջ է մտել 1 մարտի 2022թ., L. 121-6 հոդված

¹⁰⁷ Ֆրանսիա, Օրենք թիվ 2016-1691 թափանցիկության, կոռուպցիայի դեմ պայքարի և տնտեսական կյանքի արդիականացման մասին (2016թ.)

զսպվածության պարտականությունը (*devoir de reserve*), որը քաղաքացիական ծառայողներից պահանջում է չափավորություն ցուցաբերել անձնական կարծիքի *հրապարակային* արտահայտման հարցում: Պարտականության չափը տատանվում է՝ կախված մի քանի չափանիշներից՝ պաշտոնի մակարդակը, արտահայտման հանգամանքները, հրապարակայնության աստիճանը և արտահայտման ձևը:¹⁰⁸

77. Հունաստանում «Պետական հատվածի աշխատողների էթիկայի և մասնագիտական վարքագծի կանոնագիրքը» ուղղորդում է պետական հատվածի աշխատողներին արտահայտման ազատության առնչությամբ: Այն հիմնված է ընդամենը մեկ պարտավորության վրա՝ հանրային շահերի սպասարկում, որը պահանջում է մասնագիտական վարքագծի չափորոշիչների պահպանում, հանրային կառավարման մեջ էթիկայի մշակույթի ձևավորում, քաղաքացիների շրջանում պետական կառավարման հաստատությունների բարելավության նկատմամբ վստահության բարձրացում: Մի քանի բացառություններով, ինչպիսիք են զինվորականները, դասախոսական կազմը և այլն, կանոնագիրքը վերաբերում է պետական հատվածի բոլոր աշխատողներին՝ անկախ կոչումից և պարտականություններից:¹⁰⁹ Ինչ վերաբերում է մասնավորապես սոցիալական ցանցերին, այն, ի թիվս այլոց, հրահանգում է, որ աշխատակիցները պետք է օգտագործեն սոցիալական ցանցերը և համացանցն այնպես, որ չվնասեն իրենց կազմակերպության շահերին, և պետք է հատուկ ուշադրություն դարձնեն կարծիքների և անձնական համոզմունքների արտահայտմանը, որպեսզի որևէ կերպ չստեղծվի այնպիսի տպավորություն, որ դրանք արտացոլում են իրենց գործատուի տեսակետները կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են նրա հետ:

78. Շոտլանդիայում Խորհրդարանը հաստատել է «Տեղական խորհուրդների անդամների վարքագծի կանոնագիրքը» (2021թ.), որը կիրառելի է տեղական ինքնակառավարման մարմինների համար: Այն հիմնված է 2000 թվականի «Հանրային կյանքում էթիկական չափորոշիչների և այլնի մասին» (Շոտլանդիա) օրենքի վրա: Օրենքը ներմուծել է էթիկական շրջանակ, որը Շոտլանդիայի նախարարներից պահանջում է Տեղական խորհուրդների վարքագծի կանոնագրքի և ապակենտրոնացման ենթարկված պետական մարմինների անդամների օրինակելի վարքագծի կանոնագրքի հրապարակում: Չափորոշիչների հանձնաժողովը Վարքագծի կանոնագրքի դրույթները մեկնաբանելու համար տեղական խորհուրդների անդամների համար ուղեցույց է հրապարակում: Տեղական խորհուրդների անդամների վարքագծի կանոնագրքի 2025 թվականի ուղեցույցի տարբերակում հատուկ անդրադարձ է արվում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-

¹⁰⁸ Ֆրանսիա, նախարարների արձագանք թիվ 48 699 Ազգային ժողովի պաշտոնական ամսագիր (23 դեկտեմբերի 1991թ.),

Ուղեցույց քաղաքացիական ծառայողների զսպվածության պարտականության և արտահայտման ազատության մասին, Մեր հանրային ծառայությունները, հուլիս 2021թ.: Տե՛ս նաև՝ Հանրային ծառայությունում զսպվածության, հայեցողության, չեզոքության և հանրային ծառայությունում մասնագիտական զաղտնիության պարտականությունները | Service-Public.fr.

¹⁰⁹ Հանրային հատվածի աշխատողների էթիկայի և մասնագիտական վարքագծի կանոնագիրք, 2022թ.: Հասանալի է այստեղ՝ Code-final.cdr.

րդ հոդվածի հարցին:¹¹⁰ Այնտեղ նշվում է, որ տեղական խորհուրդների անդամները պետք է նշեն, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունը բացարձակ չէ և չի տարածվում կամ չի արդարացնում ատելության խոսքը կամ ակնհայտ վիրավորական և հարձակողական անձնական թիրախումները: Այն հաշվի է առնում տարբեր գործոններ, այդ թվում՝ արդյոք մեկնաբանությունները կարող են վարկաբեկել ձեր պաշտոնը կամ տեղական ինքնակառավարման մարմինը. արդյոք վերաբերմունքը քաղաքավարի, հարգալից և ուշադիր է. արդյոք ասելիքը ձևակերպվում է հարգալից և կառուցողական կերպով, ինչը կարող է ավելի մեծ ազդեցություն ունենալ՝ ուրիշների վրա ազդելու առումով. այն փաստը, որ մեկնաբանությունների կամ գրառումների «հավանումը», դրանց վերահրապարակումը կամ այլ կայքերի հղումների հրապարակումը, հավանաբար, կընկալվի որպես բնագրի կարծիքի, մեկնաբանության կամ տեղեկատվության, ներառյալ այլ կայքերում տեղադրված տեղեկատվության հավանություն. արդյոք թույլատրել անհամաձայնություն սոցիալական ցանցերի ձեր էջերում. արդյոք հումորը, հեգնանքը և սարկազմը կընկալվեն որպես փաստ, և այդ տոնը գուցե ավելի դժվար լինի փոխանցել առցանց. արդյոք անհրաժեշտ է պատասխան և/կամ արդյոք դա նպատակահարմար է կամ օգտակար. ընտրությունների հրապարակայնության նկատմամբ կիրառվող ավելի խիստ կանոնները. արդյոք տեղադրված որևէ բան կարող է համարվել անպարկեշտ:¹¹¹ Չափորոշիչների հանձնաժողովը նաև խորհրդատվական ծանոթագրություններ է մշակել՝ անդրադառնալով վարքագծի կանոնագրքի լույսի ներքո ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի կիրառմանը և տեղական խորհուրդների անդամների կողմից սոցիալական ցանցերի օգտագործմանը:¹¹²

79. Սերբիայի «Հանրային ծառայողների վարքագծի կանոնագիրքը»¹¹³ հանրային ծառայողների կողմից պարտադիր կատարման ենթակա պարտականություններ է սահմանում: Սերբիան նաև ընդունել է «Ինքնավար մարզերում և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատողների մասին» օրենքը, որը նույնպես հանրային ծառայողների համար որոշակի պարտականություններ է ներառում: Այն նաև սահմանում է, որ հանրային ծառայողները պարտավոր են գործել անաչառ և քաղաքականապես չեզոք կերպով:¹¹⁴ Ավելին, նախատեսվում է, որ դա չկատարելը

¹¹⁰ Տե՛ս Տեղական խորհուրդների անդամների վարքագծի կանոնագրքի ուղեցույց, 2025թ., էջ 12, հասանելի է այստեղ՝ [1743158220250328GuidanceonCouncillorsCode2025v2.pdf](https://www.paragraf.rs/propisi/kodeks-ponasanja-drzavnih-sluzbenika-republike-srbije.html)

¹¹¹ Տե՛ս՝ Տեղական խորհուրդների անդամների վարքագծի կանոնագրքի ուղեցույց, 2025, էջ 12, հասանելի է այստեղ՝ [1743158220250328GuidanceonCouncillorsCode2025v2.pdf](https://www.paragraf.rs/propisi/kodeks-ponasanja-drzavnih-sluzbenika-republike-srbije.html)

¹¹² Տե՛ս «Արտահայտման ազատություն. Խորհրդատվական ցուցում ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի կիրառման և տեղական խորհուրդների անդամների վարքագծի կանոնագրքի վերաբերյալ» և «Տեղական խորհուրդների անդամների համար սոցիալական ցանցերի օգտագործման մասին խորհրդատվական ցուցում», որոնք հասանելի են հետևյալ հասցեով՝ Խորհրդատվական ցուցումներ| Շոտլանդիայի ստանդարտների հանձնաժողով

¹¹³ Սերբիայի Հանրային ծառայողների վարքագծի կանոնագիրքը, <https://www.paragraf.rs/propisi/kodeks-ponasanja-drzavnih-sluzbenika-republike-srbije.html>

¹¹⁴ Ինքնավար մարզերում և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատողների մասին օրենք, 16-րդ հոդված, https://www.paragraf.rs/propisi/zakon_o_zaposlenima_u_autonomnim_pokrajinama_i_jedinicama_lokalne_samouprave.html

պարտականությունների լուրջ խախտում է:¹¹⁵ Այնուամենայնիվ, նախադեպային իրավունքը սահմանում է, որ հանրային ծառայողները չեն կարող պատասխանատվության ենթարկվել պարտականությունների ընդհանրական չկատարման համար: Նշվում է, որ յուրաքանչյուր առանձին դեպքում պետք է որոշվի, թե կոնկրետ ինչ պարտականություն չի կատարվել, և որ պետք է ճշգրիտ նշվի աշխատողի՝ անօրինական գործունեությամբ խախտված կարգավորումը:¹¹⁶

80. Շվեդիայի հանրային ծառայության ոլորտը ներառում է երեք տարբեր կատեգորիաներ՝ նախարարություններ, պետական գրասենյակներ և ազգային մակարդակի պետական գերատեսչություններ, համայնքներ և շրջաններ: «Մամուլի ազատության մասին» օրենքը և «Արտահայտման ազատության մասին» հիմնարար օրենքը պարունակում են արտահայտման ազատությունը երաշխավորող հատուկ կանոններ, մասնավորապես՝ տպագիր լրատվամիջոցների, ինչպես նաև հեռուստատեսային հեռարձակման միջոցով:¹¹⁷ Առաջինը պարունակում է բաց լինելու սկզբունքը, որի համաձայն նամակագրության և փաստաթղթերի մեծ մասը կարող է տրամադրվել նրանց, ովքեր հայցում են այն:¹¹⁸ Չնայած այս լայն պաշտպանություններին, կան նաև սահմանափակումներ, օրինակ՝ Շվեդիայի «Հանրային հատվածում զբաղվածության մասին» օրենքը, որը կարգավորում է քաղաքացիական ծառայողների գործունեությունն իրենց մասնագիտական գործունեությունից դուրս:¹¹⁹ Մասնավորապես, 7-րդ բաժինը արգելում է քաղաքացիական ծառայողներին զբաղվել այնպիսի գործունեությամբ, որը կարող է ազդել նրանց անաչառության նկատմամբ վստահության վրա կամ վնասել պետական մարմնի հեղինակությանը:¹²⁰

81. Ուկրաինան ընդունել է «Քաղաքացիական ծառայողների և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց էթիկական վարքագծի ընդհանուր կանոնները»:¹²¹ Օրենսգիրքը պարունակում է ստանդարտ էթիկական ուղեցույցներ, օրինակ՝ հայիոյանքի, խտրական դիտողությունների և ոտնձգությունների արգելք: Արտահայտման ազատության համար հատկապես կարևոր է այն դրույթը, որը պարտավորեցնում է հանրային պաշտոնատար անձանց գերծ մնալ տեղեկատվություն տարածելուց, այդ թվում՝ կայքերում և սոցիալական

¹¹⁵ Ինքնավար մարզերում և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատողների մասին օրենք, 138-րդ հոդված, https://www.paragraf.rs/propisi/zakon_o_zaposlenima_u_autonomnim_pokrajinama_i_jedinicama_lokalne_samouprave.html.

¹¹⁶ Վարչական դատարանի վճիռ, Ս 13796/20, 12 հունվարի 2022թ.

¹¹⁷ Մամուլի ազատության մասին օրենք (Tryckfrihetsförordningen; SFS 1949:105); www.riksdagen.se/sv/dokument-lagar/dokument/svensk-forfattningssamling/tryckfrihetsforordning-1949105_sfs-1949-105; Արտահայտման ազատության մասին հիմնարար օրենք (Yttrandefrihetsgrundlagen; SFS 1991:1469), www.riksdagen.se/sv/dokument-lagar/dokument/svensk-forfattningssamling/yttrandefrihetsgrundlag-19911469_sfs-1991-1469:

¹¹⁸ Մամուլի ազատության մասին օրենքի 2-րդ գլուխ

¹¹⁹ Հանրային հատվածում զբաղվածության մասին Շվեդիայի օրենքը, 1994:260

¹²⁰ Հանրային հատվածում զբաղվածության մասին Շվեդիայի օրենքը, 1994:260 7-րդ հոդված

¹²¹ Քաղաքացիական ծառայողների և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց էթիկական վարքագծի ընդհանուր կանոնները, որոնք սկզբնապես հաստատվել են Ուկրաինայի քաղաքացիական ծառայության ազգային գործակալության 2016 թվականի օգոստոսի 5-ի թիվ 158 հրամանով, վերջին անգամ փոփոխվել են 2023 թվականին: <https://zakon.rada.gov.ua/laws/show/z1203-16#Text>

ցանցերում անգամ աշխատանքային ժամերից դուրս այնպիսի մեկնաբանություններ տեղադրելուց, որոնք կարող են վնասել պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների հեղինակությանը:

82. Միացյալ Թագավորությունը տարբերակում է դնում քաղաքական պաշտոն ունեցող (ընտրված և նշանակված) անձանց և վարչական ու քաղաքացիական ծառայության պաշտոններ ունեցողների միջև: Ընդհանուր առմամբ, Միացյալ Թագավորությունը տարբերակում է իր քաղաքացիական ծառայության դերերը՝ ըստ այն բանի, թե արդյոք անձնակազմը զբաղվում է ոլորտային քաղաքականությունների անմիջական գործառնական իրականացմամբ, նախարարներին ոլորտային քաղաքականության վերաբերյալ խորհրդատվության և աջակցության տրամադրմամբ, թե՞ պատասխանատու է ծրագրերի և նախագծերի իրականացման համար, թե՞ զբաղվում է վերը նշվածների որևէ համադրությամբ: Հաշվետվողականության ուղին ուրվագծված է Քաղաքացիական ծառայության օրենսգրքում,¹²² որտեղ նշվում է, որ Քաղաքացիական ծառայությունը Միացյալ Թագավորության կառավարության անբաժանելի և կարևոր մասն է: Այն աջակցում է կառավարությանն իր քաղաքականությունների մշակման և իրականացման, ինչպես նաև հանրային ծառայությունների մատուցման գործում: Քաղաքացիական ծառայողները հաշվետու են նախարարներին, որոնք էլ իրենց հերթին հաշվետու են խորհրդարանին:¹²³
83. Քաղաքացիական ծառայության օրենսգիրքը համապատասխան իրավական ակտով ընդունվել է 2010 թվականին:¹²⁴ Այն սահմանում է քաղաքացիական ծառայության հիմնական արժեքները՝ բարեվարքություն (հանրային ծառայության պարտավորությունները անձնական շահերից վեր դասելը), ազնվություն (ճշմարտացի և բաց լինելը), օբյեկտիվություն (խորհրդատվությունն ու որոշումները հիմնել ապացույցների խիստ վերլուծության վրա) և անաչառություն (գործել բացառապես գործի էության համաձայն և հավասարապես լավ ծառայել տարբեր քաղաքական համոզմունքների տեր կառավարություններին): Օրենսգիրքը անընդունելի է համարում հետևյալ վարքագիծը՝ անձի կողմից սեփական պաշտոնեական դերի չարաշահումը, Խորհրդարանին խաբելը կամ գիտակցաբար մոլորեցնելը, քաղաքականության իրականացմանը խոչընդոտելը:¹²⁵ Քաղաքացիական ծառայողների համար արտահայտման ազատության վերաբերյալ հստակ պաշտպանություններ չկան, չնայած «Հանրային շահերի բացահայտման մասին» 1998 թվականի օրենքում առկա են ազդարարների համար նախատեսված պաշտպանության կառուցակարգեր, որոնք պաշտպանում են քաղաքացիական ծառայողներին աշխատանքից հեռացնելուց, եթե նրանք, օգտվելով պաշտպանությունից, բացահայտում են մասնագիտական

¹²² <https://www.gov.uk/government/publications/civil-service-code/the-civil-service-code>

¹²³ Քաղաքացիական ծառայություն, «Քաղաքացիական ծառայության օրենսգիրք» (Լոնդոն, 2015թ.)

¹²⁴ Սահմանադրական բարեփոխման և կառավարման մասին օրենք, 2010թ.

¹²⁵ Քաղաքացիական ծառայություն, «Քաղաքացիական ծառայության օրենսգիրք» (Լոնդոն, 2015թ.) <https://www.gov.uk/government/publications/civil-service-code/the-civil-service-code>

անփութության կամ հանցավորության հանգամանքները: Օրենսգրքի խախտումները համապատասխան գերատեսչության իրավասության տակ գտնվող կարգապահական հարցեր են, ուստի խախտումների մասին հաղորդվում է վերադաս պաշտոնյաներին: Եթե գերատեսչության կողմից խախտման գնահատականը կամ համապատասխան եզրակացությունը բավարար չէ, այն կարող է ուղարկվել Քաղաքացիական ծառայության հանձնաժողովին,¹²⁶ որը կարող է դրա հիման վրա հանձնարարական տալ: Հանրային հատվածի աշխատողներն անմիջականորեն օգտվում են 1998 թվականի «Մարդու իրավունքների մասին» օրենքի 6-րդ հոդվածից, որը պետական մարմինների համար անօրինական է դարձնում ՄԻԵԿ-ում ամրագրված իրավունքներին անհամատեղելի գործողությունները:

8. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

84. Հանրային պաշտոնյաները՝ թե՛ ընտրված, թե՛ քաղաքացիական ծառայողները, օգտվում են ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով և ՔՔԻՄԴ 19-րդ հոդվածով նախատեսված իրավունքներից, սակայն այս անձինք ունեն որոշակի սահմանափակումներ՝ պայմանավորված մասնագիտական պարտականություններով, զսպվածությամբ, անաչառությամբ և հայեցողությամբ, ինչպես նաև հարգանքով և քաղաքական չեզոքությամբ: Ընդհանուր սահմանափակումներ են կիրառվում զրպարտության և, այսպես կոչված, ատելության խոսքի համար, մինչդեռ ՔՔԻՄԴ 20-րդ հոդվածի 1-ին մասը հստակորեն արգելում է պատերազմի քարոզչությունը: Այս առումով, հանրային պաշտոն ունեցող անձինք ունեն ավելի մեծ պատասխանատվություն՝ իրենց դիրքի և հնարավոր ավելի ուժեղ ազդեցության ու ավելի լայն հասանելիության հնարավորությունների պատճառով, և, հետևաբար, պետք է հատուկ զգոնություն ցուցաբերեն՝ բացասական կարծրատիպերի հարատևումը չապահովելու և/կամ իրենց լսարանի շրջանում անհանդուրժողականություն, ատելություն, խտրականություն կամ բռնություն չհրահրելու համար:
85. Երբ արտահայտությունները վերաբերում են վիրավորանքներին կամ այլ հավանաբար վնասակար արտահայտություններին, հանրային պաշտոնյաները պետք է զսպվածությամբ և հարգանքով գործեն մասնագիտական վարքագծի կանոնագրքով սահմանված արժեքների և նորմերի նկատմամբ: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր իրավիճակ պետք է որոշվի գործի հանգամանքներով՝ տարբեր գործոնների հաշվառմամբ: Այս գործոնները ներառում են հետևյալը՝ պաշտոնյայի պաշտոնը (երբ ավելի

¹²⁶ Հանձնաժողովը 2021 թվականից ի վեր կանոնավոր կերպով չի հրապարակել բողոքների արդյունքները, չնայած որոշ տեղեկություններ տրամադրված են տարեկան հաշվետվություններում: Բողոքների ճնշող մեծամասնությունը համարվել է Հանձնաժողովի իրավասության շրջանակներից դուրս: Տե՛ս՝ բողոքների քննության արդյունքների վեբ էջ: 2021 թվականի դրությամբ հասանելի տվյալները ցույց են տալիս, որ քննություն է նախաձեռնվում հետևյալ դեպքերում՝ 2021 թվականի մայիս - Արտաքին գործերի, համագործակցության և զարգացման գրասենյակ. Քաղաքացիական ծառայողի վարքագիծը սոցիալական ցանցերում (Արդյունքը փակ է բողոքաբերից պատասխան չի ստացվել): 2021 թվականի հուլիս - Ներքին գործերի նախարարության ներքին հաղորդակցություններում օգտագործված տեքստերի անարժեքություն: Արդյունք. Հետ ուղարկվել է նախարարություն. 2021 թվականի դեկտեմբեր - Պաշտպանության նախարարության քաղաքացիական ծառայողի վարքագիծը սոցիալական ցանցերում: Արդյունք. Հետ ուղարկվել է նախարարություն:

բարձր կամ քաղաքականապես զգայուն պաշտոնները գուցե ավելի խիստ ստուգման կարիք ունենան). հաղորդակցության միջոցը (երբ սոցիալական ցանցերի հարթակների օգտագործումը կարող է մեծացնել հեղինակությանը վնաս հասցնելու կամ այլ բացասական հետևանքների ռիսկը՝ հանրության շրջանում ավելի լայն տարածման և դրա արագության պատճառով). պաշտոնյայի դիրքը, որով նա գործել է (անձնական կամ պաշտոնական/մասնագիտական). արտահայտության բովանդակությունը և տոնայնությունը (երգիծական կամ հումորային գրառումները կարող են ընկալվել և այլ վերաբերմունքի արժանանալ, քան թշնամական կամ սադրիչ գրառումները). և արտահայտությունն անելու ժամանակը և հանգամանքները (քաղաքականապես զգայուն ժամանակահատվածում կամ ճգնաժամի ընթացքում ելույթը կարող է նշանակալիորեն ավելի լուրջ հետևանքների հանգեցնել): Նմանատիպ նկատառումներ են կիրառվում նաև ապատեղեկատվության նկատմամբ, որի դեպքում հանրային պաշտոնյաները պետք է ավելի մեծ պարտավորություն կրեն՝ ցանկացած պահի և հնարավորինս ստուգված և հուսալի տեղեկատվություն տրամադրելու համար: Ավելին, կարելի է ակնկալել, որ քաղաքացիական ծառայողները զգուշություն կցուցաբերեն իրենց պաշտոնական դիրքից համապատասխան պետական մարմինների պաշտոնապես հայտարարած քաղաքականության կամ հարցերի մասին տեսակետներ արտահայտելիս: Միևնույն ժամանակ, հանրային պաշտոնյաները կարող են իրավունք կամ նույնիսկ պարտականություն ունենալ՝ բարձրաձայնելու հանրային շահին վերաբերելի մեծ նշանակություն ունեցող հարցերի մասին, մինչդեռ ազդարարները պետք է պաշտպանված լինեն, երբ գործում են հանրային շահերից ելնելով և բարեխղճորեն (օրինակ՝ առանց չարամիտ շարժառիթների):

86. Ցանկացած վիճելի դեպքում հարկ է հաշվի առնել հետևյալ հայեցակերպերը, մասնավորապես՝ 1) որոնք էին հանրային պաշտոնյայի՝ վիճարկվող վարքագծի/խոսքի շարժառիթները և 2) արդյոք դա վերաբերում է հանրային շահին առնչվող հարցի: Հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց մասնագիտական վարքագծին վերաբերող վարքագծի կանոնադրքի կամ այլ կարգավորող շրջանակների գոյությունը չպետք է խոչընդոտի հանրային բանավեճին նրանց ազնիվ և իմաստալից մասնակցությանը: Միևնույն ժամանակ, հանրային պաշտոն ունեցող անձինք ունեն սեփական անհատականության իրավունք, որն անջատ և տարբերակելի է նրանց մասնագիտական կերպարից և աշխատավայրից: Հնարավոր չէ իրավաչափ կերպով ակնկալել, որ նրանց տեսակետները, կարծիքները և արտահայտությունները լիովին կհամապատասխանեն պաշտոնական դիրքորոշմանը: Հակառակ դեպքում, կխաթարվի նրանց արտահայտման ազատության իրավունքների բուն էությունը: Վարքագծի կանոնադրքերը չպետք է սնուցեն և խրախուսեն կոնֆորմիզմը: Փոխարենը, դրանք պետք է թույլ տան բավարար աստիճանի ազատություն՝ շեղվելու մեծամասնության կարծիքից և պետք է խրախուսեն ստեղծագործական մտածողությունը և խնդիրների լուծումը:

87. Իրենց բնույթի շնորհիվ վարքագծի կանոնագրքերը էթիկական, հավակնոտ շրջանակներ են և, հետևաբար, կարող են ձևակերպվել այնպես, որ այլ պարագայում գուցե անհամատեղելի լինեն օրենքներին վերաբերող իրավական որոշակիության սկզբունքների հետ: Հարկ է ընդգծել, որ վարքագծի կանոնագրքերը պետք է արտացոլեն համաչափ կիրառումը՝ առանց ժողովրդավարական խոսույթը խեղդելու: Էթիկայի/վարքագծի կանոնագրքերը սովորաբար հղումներ են պարունակում տվյալ պետության և նրա բնակչության համար կարևոր հիմնարար սկզբունքներին և արժեքներին, որոնք, ընդհանուր առմամբ, նաև միավորող գործառույթ ունեն: Այնուամենայնիվ, երբ նման սկզբունքներն ընդգրկուն են և կարող են տարբեր մեկնաբանությունների արժանանալ, դրանք չպետք է չարաշահվեն որպես արտահայտման ազատության իրավունքը չափազանց սահմանափակելու հիմք, օրինակ՝ կանխելու համար կառավարությանը կամ նրա քաղաքականությանը քննադատող կարծիքի կամ քաղաքական հայացքների արտահայտումը, կամ կարող են ենթադրել երկրի ինքնավարության, վարչական կամ տարածքային կազմակերպման քննարկում:
88. Պետական մարմինները պետք է մշակեն քաղաքականություն, որը հարգում է արտահայտման ազատության հիմնարար իրավունքը՝ միաժամանակ ապահովելով այն, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք գործեն իրենց պաշտոնից ակնկալվող ազնվությամբ, անաչառությամբ և ամրապնդեն վստահությունը: Հավասարակշռված քաղաքականության շրջանակը պետք է ճանաչի, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք չեն զրկվում իրենց այն իրավունքներից, որոնցով օժտված են որպես մասնավոր քաղաքացիներ. ճանաչի կառավարության գործողությունների մասին բաց բանավեճի և քննադատության նկատմամբ իրավաչափ հանրային շահը. և դնի հստակ սահմաններ, թե որ պահին է խոսքը խաթարում ինստիտուցիոնալ բարեկարքությունը կամ հանրային վստահությունը: Ցանկացած սահմանափակում պետք է համապատասխանի եռակողմ թեստին՝ իրավաչափություն (օրինական նպատակ հետապնդելը), օրինականություն (օրենքով կամ այս դեպքում՝ օրենքից բխող վարքագծի կանոնագրքերով սահմանված լինելը), անհրաժեշտություն (կա նման սահմանափակման իրական անհրաժեշտություն) և համաչափություն (միջոցառումը ցանկալի նպատակին հասնելու նվազագույն ներխուժող տարբերակն է):
89. Գործող ցանկացած քաղաքականություն չպետք է հարի «գրոյական հանդուրժողականության» մոտեցմանը, այլ փոխարենը պետք է խթանի հավասարակշռված, լավ հաշվարկված, կոնկրետ դեպքի համար նախատեսված արձագանքներ, որոնք պատշաճ կերպով հաշվի են առնում հանրային պաշտոն զբաղեցնող անձի իրավունքներն ու պարտականությունները և ճանաչում են հանրային շահի ընդհանուր գերակայությունը: Պետք է նաև ընդունել, որ արտահայտման ազատության և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների հատման կետը սոցիալական ցանցերի դարաշրջանում խնդիրն ավելի ու ավելի է բարդացնում, ինչի արդյունքում, ի թիվս այլ հետևանքների, թուլանում է մասնավոր և հանրային հատվածների միջև եղած բաժանարար գիծը: Թեև

հանրային պաշտոն զբաղեցնող անձինք պահպանում են իրենց՝ որպես մասնավոր քաղաքացիներ ունեցած իրավունքները, այդ իրավունքները պետք է իրացվեն այնպես, որ չխաթարվի պետական հաստատությունների նկատմամբ վստահությունը՝ առանց վավեր պատճառների և դրա համար պատշաճ հիմնավորման: Սոցիալական ցանցերն ուժգնացնում են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ձայները և թուլացնում անձնական և մասնագիտական ինքնության միջև ընկած սահմանի հստակությունը: Հետևաբար, վարքագծի կանոնադրքերը պետք է զարգանան՝ արտացոլելու այս իրականությունը՝ ապահովելով դրանց տրամադրած ուղղորդման հստակություն, արդարություն և համապատասխանություն մարդու իրավունքների միջազգային իրավական շրջանակին և կիրառելի չափորոշիչներին:

90. Վերջնական նպատակը հանրային պաշտոն զբաղեցնողներին լռեցնելը չէ, այլ կարգավորող և/կամ քաղաքականության միջավայր ստեղծելը, որտեղ արտահայտման ազատությունը պահպանվում է էթիկական պատասխանատվության շրջանակներում: Լավ մտածված քաղաքականության մշակման, հստակ ակնկալիքների, մարդու իրավունքների և սահմանադրական պաշտպանության նկատմամբ հարգանքի միջոցով պետական հաստատությունները կարող են կողմնորոշվել այս զարգացող և հարափոփոխ տարածքում՝ առանց ժողովրդավարական արժեքները կամ հաստատութենական բարեվարքությունը վտանգելու:

[ՏԵՔՄՍԻ ՎԵՐՁԸ]